



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Մարտ, 2024

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Փաստաթղթի բովանդակությունը միմիայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացման ամսաթիվ՝ 2024թ., 27 մարտ

IDIQ պայմանագրի համար՝	7200AA19D00029
Ծրագրի TO՝	72011122F00001
Ծրագրի մեկնարկ՝	հունիսի 24, 2022
Ծրագրի ավարտ՝	հունիսի 23, 2027

Պատրաստված է՝

Tetra Tech ES, Inc.
1320 North Courthouse Road, Suite 600
Arlington, VA 22201
www.tetratech.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ	5
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	7
ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ	8
ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	8
ԱՂԲՅՈՒՐ. 2021Թ. ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՇՎԵԿՇԻՌ	9
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ SWOT ՄԱՏՐԻՑ	9
ՈՎՁՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	11
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՄՔՆԵՐԸ	11
ԳԻՏԱԿՑԵԼ-ՉԳԱԼ-ԳՈՐԾԵԼ ՄՈՏԵՑՈՒՄԸ	11
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	12
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՃԸ	13
ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂԴԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ	14
ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ	14
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	15
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ	17
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ	19
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ (MEL)	21
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	22
ԳՆԱՀԱՏՈՒՄ	23
ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ	23
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ	31
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	31
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1. ԹՎԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	31
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ	33
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3. ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՉԵԼԻՆՋ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԱՐՇԱԿՅԹ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	35
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԵՌՈՒՄՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ	35
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5: ՎԷԱ ԵՎ ԷԱ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆՈՐԴ ՈՂԱԿՆԵՐՈՎ	36
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6: ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆԱԽԱԳԾԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	37
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԽԹԱՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ	38
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 8: ԷՔՍՊՈ ԵՎ ՄԵԴԻԱ ՇՐՋԱՅՑ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ ԲԻՋՆԵՄՆԵՐ	41
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9: ՎԷԱ ԵՎ ԷԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	41
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10: ՀԱՄԱԺՈՂՈՎ ԲԻՋՆԵՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ	42
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԱՉԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՄԱԲԱՆՈՒՄ	43
ՓՈԽԼՐԱՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	44
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱԿԱՌԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ	44

ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՄԱԿՆՇՈՒՄ	45
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	45
ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԱՌԱՋԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԻՐԱԽՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆ	47
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ, 2023-2024 ԹԹ	51
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՀԻՄՆԱՐԱՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	53
ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	67
ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ	69
ՀԱՎԵԼՎԱԾ Ձ. ՖՀ-ՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ	70
ՀԱՎԵԼՎԱԾ Է. ԿԷ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ	74
ՀԱՎԵԼՎԱԾ Ը. ԷԱ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ	77
ՀԱՎԵԼՎԱԾ Թ. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ	81

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ACE	ԷՍՍ	Էներգասպառող սարքեր և սարքավորումներ
CEPA	ՀԸԳՀ	ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերություն համաձայնագիր
CNPO	ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
CSO	ԶՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ES	ԷԽ	Էներգախնայողություն
ESF	ԷԽՀ	Էներգախնայողության աջակցման հիմնադրամ ՀԿ
ESRE	ԷԽՎԷ	Էներգախնայողություն և վերականգնվող էներգիա
EPBD	ՇԷԱԴ	Շենքերի էներգաարդյունավետության դիրեկտիվ
EU	ԵՄ	Եվրոպական միություն
F2F	ԴաԴ	Դեմ առ դեմ
FI	ՖՀ	Ֆինանսական հաստատություն
GC	ԳՀ	Գյումրի համայնք
GHG	ԶԳ	Զերմոցային գազ
GOAM	ՀԿ	Հայաստանի կառավարություն
Ktoe	կտ և.հ.	Կիլոտոննա նավթային համարժեք
MAB	ԲԲՇ	Բազմաբնակարան շենք
MEL	ՄԳՓԱ	Մշտադիտարկում, գնահատում և փորձի ամփոփում
MI	ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
MLET	MLET	Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագիր
MMS	ՇԿԾ	Շուկայի կառավարման ծրագիր
MoESCS	ԿԳՄՍՆ	Կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
MTAI	ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
MWh	ՄՎտժ	Մեգավատ-ժամ
NEEAP	ԷԳԱՊ	Էներգաարդյունավետության գործողությունների ազգային պլան
NESREP	ԷՎԷԱԾ	Էներգախնայողություն և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր
NGO	ՀԿ	Հասարակական կազմակերպություն
NPO	ՇԶԿ	Շահույթ չհետապնդող կազմակերպություն
PE	ԱԶ	Անհատ ձեռներեց
PI	ՖԱ	Ֆիզիկական անձ
PIU	ԾԻԳ	Ծրագրի իրականացման գրասենյակ
PSRC	ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
R2E2	ՀՎԷԷՀ	Հայաստանի Վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամ
RE	ՎԷ	Վերականգնվող էներգիա
RES	ՎԷԱ	Վերականգնվող էներգիայի աղբյուր
SFH	ՄԸՏ	Առանձնատուն (մեկ ընտանիքի համար նախատեսված տուն)
SME	ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություններ
SNPO	ՊՈԱԿ	Պետական ոչ-առևտրային կազմակերպություն
SWOT	SWOT	Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն
TV	TV	Հեռուստատեսություն
USAID	ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների պլանը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կողմից ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (ՏԿԵՆ) տրամադրվող տեխնիկական աջակցության շրջանակներում՝ ՀՀ կառավարության 2022թ. մարտի 24-ի N 398-Լ որոշմամբ ընդունված Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի (ԷՎԷԱԾ) ու դրա առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող միջոցառումների իրականացման նպատակով: Ծրագիրն աջակցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ), մասնավոր հատվածին և Էներգետիկայի բնագավառի այլ շահագրգիռ կողմերին՝ երկրի Էներգամատակարարումը դիվերսիֆիկացնելու, ներմուծվող գազից կախվածությունը նվազեցնելու և ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու նպատակով՝ նպաստելով Հայաստանի Էներգետիկայի բնագավառի որպես երկարաժամկետ տնտեսական աճի շարժիչ ուժ հանդիսանալուն:

ՎԷԱ և ԷԱ վերաբերյալ հաղորդակցությունը և իրազեկումը Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի (ԷՎԷԱԾ) ու դրա առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող միջոցառումների մի մասն են կազմում և առաջնահերթության կարգով են դիտարկվում Էներգախնայողության և վերականգնվող Էներգիայի (ԷԽՎԷ) մասին օրենքում: ՏԿԵՆ-ն այն մարմինն է, որը պատասխանատվություն է ստանձնել հաղորդակցության արշավի միջոցով բարձրացնել ՎԷԱ և ԷԱ վերաբերյալ իրազեկվածությունը:

Հաղորդակցության ռազմավարության առաջնային նպատակներն են՝ (ա) բարձրացնել ՎԷԱ և ԷԱ մասին իրազեկվածությունը և խթանել դրա զարգացումը այն սպառողների շրջանում, որոնք կիրառում են տեխնոլոգիաներ և սպառում Էներգիա, և (բ) տեղեկացնել Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման շնորհիվ ստեղծված հնարավորությունների մասին: Հաղորդակցության գործողությունները ներառում են միջոցառումներ ուղղված տեղեկատվության տարածմանը, իրազեկվածության բարձրացմանը, շահագրգիռ կողմերի ներգրավմանն ու պրակտիկ քայլերի խրախուսմանը:

Գործողություններն ուղղված են սպառողի վարքագիծը և Էներգասպառման հետ կապված սովորույթները փոխելուն, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գենդերային հավասարության պահպանմանը, երիտասարդների ներգրավմանը, նորարարության և արդի տեխնոլոգիական լուծումների կիրառմանը: Ծրագիրը մտադիր է ՏԿԵՆ-ին աջակցել նաև վերջինիս գործունեության մասին տեղեկատվությունը հանրության լայն շրջանակներում տարածելու և հասանելի դարձնելու հարցում: Հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների պլանն իրագործելու համար Ծրագիրը համագործակցելու է Էներգետիկայի բնագավառի շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների և գործընկերների հետ, ինչը կպահանջի զգալի ջանք և ռեսուրսներ:

Հաղորդակցության սույն ռազմավարությունը և գործողությունների պլանը մշակվել են հետազոտությունների, հարցազրույցների, հարցումների արդյունքների և նախկինում իրականացված տեղեկատվական արշավների, ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ Շուկայի ազատականացման և Էլեկտրաէներգիայի առևտրի (MLET) ծրագրի՝ ՎԷ և ԷԱ-ի իրավական բացերի վերլուծության հիման վրա: Գործողությունների պլանը, որը կազմվել է ռազմավարության նպատակներից ելնելով, ընդգրկում է 2023-2027թթ. ժամանակահատվածը:

ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը ԷԽՎԷ օրենքով, ինչպես նաև բոլոր ԷՎԷԱԾ/ԷԳԱԴ-ներում դիտարկվող առաջնահերթ պահանջներից մեկն է: Համաձայն ԷԽՎԷ օրենքի 6-րդ հոդվածի, Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակով պետական կառավարումը պետք է ներառի ուսուցման կազմակերպումը, գիտատեխնիկական առաջընթացին, տեղեկատվությանը և քարոզչությանն աջակցումը: Նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն Կառավարության լիազորած մարմինների կողմից Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին տեղեկատվության տարածումն իրականացվում է՝

- Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի ոլորտի խնդիրների հանրային քննարկմամբ, նրանց բնապահպանական, տնտեսական և սոցիալական առավելությունների իրազեկմամբ և քարոզչությամբ,
- առկա Էներգախնայող սարքավորումների և Էներգախնայողությամբ նախագծերի մասին իրազեկմամբ,
- Էներգախնայող տեխնոլոգիաների ու սարքավորումների, ինչպես նաև Էներգաարտադրող կայանների ցուցադրությունների կազմակերպմամբ,
- Էներգետիկ ռեսուրսների խնայողության և ՎԷ զարգացման ազգային պահանջների ու առաջնահերթությունների քարոզչությամբ:

Ինչպես նշվում է ԷՎԷԱԾ-ում, բնակչության կողմից ՎԷԱ և ԷԱ միջոցառումների իրականացման համար մեծ նշանակություն ունի հանրային իրազեկվածությունը: Հայաստանում այս տեսանկյունից բնակչության իրազեկվածության մակարդակի մասին պարբերական հետազոտություններ չեն իրականացվում: Այս առումով առաջարկվում է բնակչությանը տեղեկացնել ԷԱ բարձրացման եղանակների, ՎԷԱ օգտագործման և Էներգախնայող տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ու տարբերակների մասին, ինչպես նաև թիրախային խմբերում անցկացնել պարբերական հարցումներ: Բացի այդ, ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ԵՄ Էներգաարդյունավետության դիրեկտիվի (ԷԱԴ) և Շենքերի Էներգաարդյունավետության դիրեկտիվի (ՇԷԱԴ) դրույթների տեղափոխումը հայկական իրավական դաշտ պարունակում է Հայաստանին ուղղված պահանջ, այն է մշակել՝ 1) սպառողների իրազեկման ու իրավունքների մասին ծանուցման ծրագրեր, 2) տեղեկատվական ու ուսուցողական ծրագրեր, 3) տնային տնտեսությունների իրազեկման ծրագրեր:

MLET ծրագրի ՎԷԱ բացերի վերլուծությունն առաջարկում է խթանել և բարձրացնել շենքերում ՎԷԱ օգտագործման վերաբերյալ իրազեկվածությունը: Բացի այդ, նշվում է, որ պետական մարմիններին, ՎԷԱ տեղակայանքների նախագծողներին, տեղադրողներին, շենքերի սեփականատերերին ուղղված տեղեկատվական ու իրազեկման միջոցառումները հանդիսանում են ոլորտի զարգացման հիմնասյունները:

MLET ծրագրի ԷԱ բացերի վերլուծության շրջանակներում պարզվել է, որ Հայաստանի իրավական դաշտը չի նախատեսում Էներգետիկ փորձաքննության առավելությունների վերաբերյալ տնային տնտեսությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների իրազեկվածության բարձրացման ծրագրեր: Բացակայում են ԷԱ-ի վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանն ուղղված նպատակային մեխանիզմների վերաբերյալ իրավական դրույթներ, պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ԷԱ ծրագրերին մասնակցելու հնարավորություններ և ԷԱ ֆինանսավորման միջոցառումներ՝ ներդրողների, մշակողների, ֆինանսական հաստատությունների և Էներգետիկ շուկայի այլ շահագրգիռ մասնակիցների համար:

Ենթաօրենսդրական ակտերում բացակայում է շենքերի սեփականատերերին կամ վարձակալներին ԷԱ սերտիֆիկատների և ստուգման հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու պահանջը:

MLET ծրագրի ԷԱ բացերի վերլուծության մեջ թափանցիկությունը բարձրացնելու, ԷԱ իրականացման առկա մեխանիզմների մասին տեղեկատվությունը լայնորեն տարածելու և իրազեկման բարձրացման ու վերապատրաստման նախաձեռնություններ իրականացնելու նպատակով առաջարկվում է, որ Հայաստանի կառավարությունը մշակի տեղեկատվության տրամադրման ընթացակարգ՝ Էներգասպառողներին և միջազգային ֆինանսական հաստատություններին ԷԱ-ի վերաբերյալ համապատասխան և նպատակային տեղեկատվություն ու խորհրդատվություն տրամադրելու, ինչպես նաև ֆինանսավորման բազմաթիվ ֆոնդերի ներհոսքն ապահովելու համար:

Այս դիտարկումները հիմնավոր փաստարկներ են տրամադրում ՎԷԱ և ԷԱ իրազեկմանը և խթանմանն ուղղված հաղորդակցության ազդեցիկ քարոզարշավ իրականացնելու համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ

Հաղորդակցության ռազմավարության և գործողությունների ծրագրի հիմքում ընկած է թիրախային լսարանների, հաղորդակցության առավել արդյունավետ գործողությունների, ուղիների ու գաղափարների բացահայտման գնահատումը, որոնք ապահովում են այս ռազմավարության նպատակների բարեհաջող իրականացումը: Թիրախային լսարաններն ընտրվել են՝ ելնելով նրանց ՎԷԱ և ԷԱ մասին պատկերացումներից և առաջնահերթություններից, և դրանց համատեքստում՝

- Էներգետիկ անվտանգությունը,
- Ֆինանսական միջոցների խնայողությունը,
- Կլիմայի գործողություններ, հատկապես՝ ՎԷԱ և ԷԱ կիրառմամբ կլիմայի փոփոխության ազդեցության մեղման միջոցառումները:

Այնուհետև լսարանների նկատմամբ կատարվել է ելակետային իրավիճակի գնահատում, որը ներառում է ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային տվյալների, այդ թվում 2023թ. փետրվար-ապրիլ ամիսներին տարբեր աղբյուրներից, ներառյալ բացերի վերլուծություններից, հարցումներից, շահագրգիռ կողմերի ու գործընկերների հարցազրույցներից, և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության ուսումնասիրման և վերլուծության միջոցով: Մասնավորապես իրականացվել են՝

- **փաստաթղթային ուսումնասիրություններ՝** Էներգետիկ անվտանգության, ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների և այդ տեխնոլոգիաների կիրառման փորձի, մարտահրավերների և արգելքների/խոչընդոտների վերաբերյալ իրազեկման հիմնական բացերը հայտնաբերելու համար,
- **հարցումներ՝** ՎԷԱ և ԷԱ բնագավառում մատակարար ընկերությունների (ներառյալ Էներգասպառող սարքերի և սարքվածքների) ու մանրածախ առևտուր իրականացնող ընկերությունների, ֆինանսական հաստատությունների ինչպես նաև համայնքների շրջանում՝ թիրախային լսարանները, պոտենցիալ գործընկերները, տեղեկատվության տարածման ուղիները բացահայտելու համար,
- **տվյալների հավաքագրում առաջնային աղբյուրից՝** ինքնուրույն լրացվող առցանց հարցման միջոցով:

Վերոնշյալ հարցումներին մասնակցող խմբերի արձագանքման մակարդակները հետևյալն են.

- կանաչ ֆինանսավորմամբ զբաղվող կամ հետաքրքրված ֆինանսական հաստատությունները՝ 100% (բանկերի, ունիվերսալ վարկային կազմակերպությունների 24 հարցված ներկայացուցիչ),
- ՎԷԱ լուծումներ տրամադրող ընկերություններ՝ 94 տոկոս (17 հարցված ընկերություն),
- ԷԱ լուծումներ տրամադրող ընկերություններ՝ 25 տոկոս (25 հարցված ընկերություն),
- սարքերի և սարքվածքների առաջատար ներմուծող մանրածախ վաճառքի ընկերություններ՝ 25 տոկոս (2 ներկայացուցիչ),
- համայնքներ՝ 97 տոկոս (երկրի 71 համայնքներից 69 մասնակցած համայնք):

Հարցման բոլոր մասնակիցների հետ նախնական կապ է հաստատվել հեռախոսով՝ հարցման մասնակցությունն օժանդակելու համար: Կապը հաստատվել է ոչ միայն ելակետային իրավիճակի գնահատման համար հարցումն ամբողջականացնելու նպատակով, այլ նաև նախնական կապ ստեղծելու և հետագա համագործակցությունը զարգացնելու նպատակով:

Հարցազրույցներ են անցկացվել Հայաստանի Էներգետիկա անվտանգության ծրագրի հիմնական գործընկերների և այլ փորձագետների հետ՝ բացահայտելու ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների խթանման և կիրառման հետ կապված հիմնական արգելքները, թիրախային լսարանները, լսարաններին ուղղված ուղերձներն ու դրանք հասցնելու ուղիները: Հաջորդ բաժնում ներկայացված են ելակետային գնահատման արդյունքները:

ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ

ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի մշակման սկզբնական փուլում իրականացվել է վերլուծություն՝ հիմնական շահագրգիռ կողմերի որոշելու/սահմանելու համար: Հաշվի առնելով իրենց դերակատարությունը և պատասխանատվությունը շահագրգիռ կողմերը դասակարգվել են երկու խմբերում՝ հնարավոր թիրախային լսարաններ՝ անհատներ կամ խմբեր, որոնց հասցեագրված են հաղորդակցության ուղերձները, և գործընկերներ, որոնք ազդում են Էկոհամակարգի վրա:

Հաղորդակցության ռազմավարության և գործունեության պլանի թիրախային լսարանները սահմանելու համար դիտարկվել են ստորև բերված չափանիշները: Դրանց քանակական ցուցանիշները որոշ լսարանների համար ներկայացված են Աղյուսակ 1-ում:

- **Էներգասպառման մակարդակը:** Վերջնասպառողների նախնական ընտրությունը կատարվել է հիմք ընդունելով Հայաստանի 2021թ. Էներգետիկ հաշվեկշիռը, ինչպես նաև հաշվի առնելով նրանց սպառման մակարդակները: ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների համար իրականացվող քարոզարշավում բարձր սպառում ունեցող Էներգասպառողներին թիրախավորելը կարող է նպաստել Էներգիայի օգտագործման և ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատման և հետևաբար հնարավոր ծախսերի խնայողության, խրախուսել կայուն Էներգիայի լուծումների կիրառումն ու ապահովել ավելի մեծ ներդրումներ:
- **Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի հետ առնչությունը:** ՎԷԱ և ԷԱ օրենսդրական դաշտի բարեփոխումները, որոնք կազդեն յուրաքանչյուր խմբի վրա, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների, համայնքների և բնակչության լայն շրջանակների համար իրականացվող ՎԷԱ և ԷԱ զարգացմանն ուղղված գործողությունները համահունչ են Ծրագրի գործունեության շրջանակին:

ՎԱ/ԷԱ տեխնոլոգիաների կիրառման ներուժը: Հաղորդակցության արշավի նպատակն է հնարավորինս ընդլայնել ՎԷԱ/ԷԱ տեխնոլոգիաների ինտեգրման ներուժը: Հետևաբար, սահմանվել է չափանիշ՝ գնահատելու, թե որոնք են ՎԷԱ/ԷԱ տեխնոլոգիաներ առավել շատ ձեռք բերող և օգուտ ստացող խմբերը: Ծրագիրը փաստաթղթային հետազոտություն է անցկացրել՝ պարզելու, թե ներկայումս որ խմբերն են այդ տեխնոլոգիաների հիմնական օգտագործողները: Հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանի հանրային հաստատությունները՝ ամենամեծ ՎԷԱ/ԷԱ կիրառողներն են,

կազմելով ընդհանուրի 42%-ը, որոնց հաջորդում են բիզնես կազմակերպությունները, կազմելով 31%, ֆիզիկական անձինք՝ 26%: Քանի որ հանրային հաստատությունները և բիզնես կազմակերպությունները հիմնական կիրառողներն են, առաջարկվել է, որ հաղորդակցման արշավը կենտրոնանա այս խմբերի շուրջ՝ որպես թիրախային լսարաններ: Այնուամենայնիվ, կայուն էներգիայի լուծումներ յուրացնելու/կիրառելու և էներգասպառման վարքագիծը փոխելու գաղափարը հանրությանը հասցնելու համար շատ կարևոր է իրազեկման ջանքերն ուղղել նաև անհատների ուղղությամբ: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էՎԷԱ տեխնոլոգիաներն ավելի հաճախ են կիրառվում քաղաքային բնակավայրերում, մինչդեռ արևային տեխնոլոգիաներն ավելի տարածված են գյուղական շրջաններում: Հաշվի առնելով այս հանգամանքը, հաղորդակցության քարոզարշավի արդյունավետությունն ապահովելու համար պետք է նկատի ունենալ, որ տեխնոլոգիաների կիրառման մոտեցումները քաղաքային վայրերում և գյուղական վայրերում տարբեր են, և քարոզարշավի միջոցառումները պետք է հարմարեցնել յուրաքանչյուր տարածաշրջանին հատուկ կարիքներին և հանգամանքներին:

ԱՐՅՈՒՄԱԿ 1. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ՝ ԷՆԵՐԳԱՄԱՊԱՌՈՂՆԵՐ

ԷՆԵՐԳԱՄԱՊԱՌՈՂ	ԷՆԵՐԳԱՄԱՊԱՌՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ (ԿՏԵՂ)	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ ԱՈՆՉՈՒԹՅՈՒՆ	ՎԷԱ/ԷԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԵՐՈՒԺ
Բնակչություն/Տնային տնտեսություններ	961.6	v	v
Տրանսպորտ	899.8		
Առևտուր և հանրային ծառայություններ	434.1	v	v
Արդյունաբերություն Ոչ մետաղական օգտակար հանածոներ Լեռնահանքային արդյունաբերություն և քարհանք Սնունդ, խմիչք, ծխախոտ և այլն	370.6	v	
Գյուղատնտեսություն	103.4		

Աղբյուր. 2021թ. ՀՀ Էներգետիկ հաշվեկշիռ

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ԷՎԷԱԾ/ԷԳԱՊ-ի թիրախները և MLET ծրագրի ՎԷԱ և ԷԱ բացերի վերլուծության առաջարկությունները՝ բնակիչները, համայնքներն ու առևտրային ձեռնարկությունները ճանաչվել են որպես թիրախային լսարաններ, այնուհետև դա հաստատվել է ելակետային իրավիճակի գնահատմամբ:

ՀԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ SWOT ՄԱՏՐԻՑ

Փաստաթղթային հետազոտության, հարցազրույցների և հարցումների միջոցով (Հավելվածներ Դ-Է) մշակվել է «Ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն» (SWOT) մատրիցը (Աղյուսակ 2):

ԱՐՅՈՒՄԱԿ 2. ՀԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ SWOT ՄԱՏՐԻՑ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
--------------	--------------

ԱՂՅՈՒՄԱԿ 2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ SWOT ՄԱՏՐԻՑ

- Կլիմայի փոփոխության դեմ պայքարի կարևորության մասին ընդհանուր իրազեկվածություն:
- **Երիտասարդության** դերի ճանաչում կլիմայի փոփոխության հետ կապված գործողություններում:
- **Բնակչության** կողմից ԷՄԱ և ԷԱ գործողությունների յուրացում/իրականացում:
- ՎԷԱ և ԷԱ գործողությունները՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ամենատարածված միջոցառումներն են, որոնք ձեռնարկվում կամ պլանավորվում են փոքր և միջին ձեռնարկությունների (**ՓՄՁ**) կողմից, հատկապես միջին ձեռնարկությունների կողմից:
- Էներգետիկ ոլորտում աշխատում են **կին փորձագետների** հզոր ցանց:
- «Էներգետիկ անվտանգություն» տերմինի թույլ/թուր ընկալում հարցվողների շրջանում (այս հարցման դեպքում՝ **բնակչություն**): ԷԱ-ն չի ասոցացվում Էներգետիկ անվտանգության հետ:
- Էներգետիկայի բնագավառի վերաբերյալ հաղորդակցությունը կատարվում է ոչ-պարբերական և հազվադեպ: ՎԷԱ և ԷԱ-ի վերաբերյալ արդի տեղեկատվության կենտրոնացված հարթակի բացակայությունը ՎԷ/ԷԱ տեխնոլոգիաների, ինչպես նաև ֆինանսական խթանների կամ հնարավորությունների մասին սահմանափակ գիտելիք խմբերի մեծամասնության շրջանում:
- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կիրառման ցածր տարածման մակարդակ ֆինանսական սահմանափակումների և հասանելիության բացակայության պատճառով, ինչպես բնակիչների, այնպես էլ համայնքների համար: Դրան գումարվում է ընթացիկ աջակցության և ներդրումային սխեմաների վերաբերյալ տեղեկատվության ու կարողությունների բացակայությունը:
- **Համայնքների** ավելի քան 70%-ը չունեն Էներգետիկ տվյալների բազաներ և Էներգետիկ անվտանգության ներուժի բացահայտման համար անհրաժեշտ վերլուծության փորձ:
- ՎԷԱ օգտագործումն ավելի շատ մնում է պլաններում, քան իրականացվում է և այն չի հանդիսանում առաջնահերթություն **ՓՄՁ**-ների մեծ մասի համար:
- «Կանաչ» Էներգիայի օգտագործումը հաճախ կամավոր է և կախված է **ընկերությունների** առանձին աշխատակիցների ընկալումներից և համոզմունքից, պարտադրված չէ կամ չի խրախուսվում ոլորտի ռազմավարական նպատակներից ելնելով:
- Ըստ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներ վաճառող ընկերությունների տվյալների, կանանց թիվը ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներ օգտագործողների/գնորդների շրջանում 20%-ից պակաս է:

ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման արդյունքում բարելավված ՎԷԱ զարգացման իրավակարգավորման շրջանակ:
- Արևային Էներգիայի նախագծերի իրականացման լայն հնարավորություններ և հարցվողների (**բնակչության**) շրջանում հետաքրքրության բարձր մակարդակ:
- Հարցվողների 71%-ը վստահ է, որ կառավարությունը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնի արևային և հողմային Էներգիայի օգտագործմանը՝ Էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար:
- Խթանների և հնարավորությունների մասին արդյունավետ հաղորդակցությունը դրական ազդեցություն ունի ցանկալի արդյունքներն ապահովելու համար: Կառավարությունը կարող է օգտագործել նպատակային հաղորդակցության ռազմավարությունը՝ համապատասխան լսարաններին արդյունավետ կերպով հասնելու համար:

ՄՊԱՌՆԱԼԻՋՆԵՐ

- Ֆինանսական սահմանափակումները խոչընդոտում են ԷԱ միջոցառումների և ՎԷԱ համակարգերի ներդրմանը:
- Ռեսուրսների գների շարունակական աճը սպառնալիք է բիզնեսի զարգացման համար: Փոքր բիզնեսը հատկապես զգայուն է ռեսուրսների գների տատանման նկատմամբ:
- Սպառողական գների աճ:
- Տարածաշրջանային անկայունությունը կարող է խոչնդոտել ՎԷԱ և ԷԱ ծրագրերի առաջընթացը:
- Հաղորդակցության ռազմավարության և վերլուծության, տեղեկատվական ու իրազեկման ուղեցույցների բացակայությունը՝ գնահատելու համար ցանկացած ներդրման ազդեցությունը ռեսուրսների արդյունավետության և արտադրանքի/ծառայությունների որակի վրա:

ԱՐՅՈՒՄԱԿ 2. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ SWOT ՄԱՏՐԻՑ

- Հայաստանում Էներգետիկ անվտանգության բարելավման գործընթացին կարելի է նպաստել տարբեր խմբերի միջև համագործակցության և արդյունավետ հաղորդակցության միջոցով:
- Հայաստանում գործող ՓՄՁ-ներն արդեն իսկ իրականացրել են որոշակի ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցառումներ՝ մատնանշելով ՎԷԱ ներդրման հաշվին այդ ներուժը հետագայում զարգացնելու հնարավորությունը:

Էներգետիկ ռեսուրսների և սպառողական գների աճը կարող է խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ նպաստելով բիզնեսի՝ հատկապես փոքր բիզնեսի զարգացմանը: Այս հնարավորությունից կարող են օգտվել նաև բնակիչներն ու տնային տնտեսությունները:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաղորդակցության հետ կապված գործունեության առաջնային նպատակն է՝ բարձրացնել իրազեկվածության մակարդակը և խթանել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կիրառումն այն խմբերի շրջանում, որոնք Էներգիա են սպառում և պատրաստ են ներդնել այդ տեխնոլոգիաները: Բացի այդ, հաղորդակցության արշավը հնարավորություն է տալու հանրությանը տեղեկացնել Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և դրա առավելությունների մասին: Այդպիսով, այն կնպաստի Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի երկարաժամկետ նպատակների իրականացմանը՝

- դիվերսիֆիկացնել երկրի Էներգամատակարարումը,
- նվազեցնել ներմուծվող գազից կախվածությունը,
- կրճատել ջերմոցային գազերի արտանետումները,
- նպաստել Հայաստանի Էներգետիկայի բնագավառի որպես երկարաժամկետ տնտեսական աճի շարժիչ ուժ հանդիսանալուն:

Հաղորդակցության հիմնական արդյունքները ներառում են.

- ՎԷԱ արտադրության ավելացում,
- բարելավված Էներգետիկ ծառայություններ ստացող շահառուների թվի ավելացում, ,
- կլիմայի վերաբերյալ տեղեկատվություն կիրառող կամ ռիսկերի նվազեցման գործողություններ իրականացնող մարդկանց թվի ավելացում, ինչը բարելավում է կլիմայի փոփոխության նկատմամբ կայունությունը,
- Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ավելի լավ ընկալում և պատկերացում:

ԳԻՏԱԿՑԵԼ-ԶԳԱԼ-ԳՈՐԾԵԼ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Վարքագծային փոփոխության հասնելու համար հաղորդակցության բոլոր գործողություններում պետք է հաշվի առնել, որ հաղորդակցության քարտեզավից հետո թիրախային լսարանից ակնկալվում է.

Գիտակցել, որ

- Էներգետիկ անվտանգությունը երաշխավորում է բնակիչների բարեկեցությունն ու տնտեսական մրցունակությունը,
- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ընտրությունը տրամաբանական է, ավելին, խոսակցական բառապաշարով՝ «թույն» որոշում է,
- ապագան ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներին է, և մենք պետք է գործենք արդեն այսօր,
- Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացումը խթանում է նորարարությունը և մրցակցությունը, ապահովում է մատչելի էներգիա բոլորի համար:

Ձգալ

- վստահ ներկայում և ապագայում՝ շնորհիվ էներգետիկ անվտանգության, կամ՝ շնորհիվ էներգետիկ անվտանգության՝ վստահություն ներկային և ապագային վերաբերող հարցերում,
- խելացի (ունենալով ցածր կոմունալ վճարներ, արդյունավետ շահագործման ծախսեր և այլն),
- նորարար և ժամանակակից,
- ՎԷԱ և ԷԱ ներդրումները նպատակային են արվել, կամ՝ նպատակի են ծառայում:

Գործել

- Էներգետիկ անվտանգության գաղափարի ջատագովը լինել ազգային, տեղական և անհատի մակարդակներում,
- Ժամանակ, զուտար և ջանք ներդնել ԷԱ մակարդակը բարելավելու և ՎԷԱ օգտագործումն ավելացնելու համար,
- խմբային հաշվառման դեպքում (group metering)՝ կայացնել համատեղ որոշումներ և համագործակցել,
- շուկայում դառնալ ակտիվ մասնակից և օպտիմալացնել էներգիայի ծախսերը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Քարտեզավի նպատակներին հասնելու և հանրային ընկալումներն ու գործողությունները խթանելու համար, հաղորդակցության գործունեությունը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

- բարձրացնել և ամրապնդել ՎԷԱ և ԷԱ կարևորության մասին իրազեկվածության մակարդակը,

- պատմել/ցույց տալ, թե ինչպես կարելի է օգտվել (օրինակ՝ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների մասին ուղեցույցների, տեղեկատվության, ինֆորաֆիկական պաստառների, Նորությունների, Էքսկուրսիաների միջոցով),
- ներգրավել (կազմակերպելով մրցույթներ, մրցանակաբաշխություն, շուկայի կառավարման ծրագրի (ՇԿԾ) ցուցադրություն, պիլոտային նախագծերի ցուցադրություն),
- փորձը փոխանակել (կոնֆերանսների, հավաքների, դեպքերի ուսումնասիրության, տեսագրությունների, պողքաստների, քննարկումների, հաջողության պատմությունների միջոցով),
- հաղորդակցության արշավն օգտագործել կանանց ավելի մեծ հնարավորություններ ընձեռելու նպատակով ստեղծվող բովանդակության մեջ թույլ չտալով ավանդական գենդերային Նորմերով պայմանավորված խտրականության վերարտադրումը, փոխարենն ի ցույց դնելով Նոր առաջադեմ մտածողության առավելությունները:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՃԸ

Վերը սահմանված նպատակներին արդյունավետ կերպով հասնելու և թիրախային լսարաններում ցանկալի ընկալումներ ձևավորելու համար՝ հաղորդակցության ռազմավարությունը պետք է լսարանի համար լինի հարմար, պարզ և ի ցույց դնի սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտները: Ուղերձները պետք է զերծ լինեն տեխնիկական տերմինաբանությունից, հատկապես ոչ տեխնիկական կրթությամբ լսարանին ուղղված ուղերձները: Պետք է օգտագործել ստուգաքանկեր/ուղեցույցներ՝ ՎԷԱ և ԷԱ և Էներգետիկայի ոլորտի զարգացումների, ներառյալ Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման վերաբերյալ տեղեկատվության փոխանցման ու հանրությանն իրազեկման համար:

Կառավարության և համայնքների ներկայացուցիչները, որոնք առանցքային պաշտոններ են զբաղեցնում համապատասխան նախարարություններում և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետք է հանդես գան որպես Էներգետիկ խնդիրների և լուծումների հիմնական խոսնակները: Սակայն ոչ պակաս կարևոր է լսել նաև հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ղեկավարներին, ովքեր մասնակցություն ունեն այս հարցում, ինչպես նաև ներգրավել կանանց և երիտասարդներին:

Կարելի է զաղափարները հասցնել ավելի լայն լսարանի, և ուղերձներն ավելի տեսանելի դարձնել՝ ներառելով համապատասխան հիմնաբառեր հեշթեգերի տեսքով սոցիալական մեդիայի գրառումներում: Տեղեկատվությունը պետք է ներկայացված լինի համապատասխան ուղերձներով և պարունակի մանրամասներ՝ նյութի ընկալումը հեշտացնելու համար, ինչպես նաև տվյալներ տեխնոլոգիայի, դրա առավելությունների, այդ թվում Էներգիայի և բյուջեի խնայողության մասին և այլն:

Արդյունավետ հաղորդակցության գործընթացը ներառում է նաև տեղեկատվական նյութերի մշակումն ու տարածումը, և սերտ համագործակցությունը հանրային ու համայնքային, ինչպես նաև մասնավոր լրատվամիջոցների ու մամուլի հետ:

Տարբեր մասնագիտական փորձ ունեցող և տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչներն ու կարծիք ստեղծողները/առաջնորդողները (ազդեցիկ անձինք) պետք է տեղեկատվությունը ներկայացնեն տարբեր տեսանկյուններից:

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂԴՎԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ

Հիմնվելով ելակետային իրավիճակի գնահատման և ընտրված չափանիշների վրա՝ ընտրվել են երեք թիրախային լսարաններ, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում (այն է՝ Էներգասպառման մակարդակը, Ծրագրի հետ առնչությունը և ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կիրառման ներուժը): Այս լսարանների ընտրությունը հաստատվել է նաև շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների ժամանակ:

- **Համայնքներ:** Հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների պլանը թիրախավորում են համայնքային ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ «համայնքներ») որպես Էներգիա օգտագործողների, ներառյալ նրանց անձնակազմը և ենթակառուցվածքները, ինչպիսիք են վարչական և համայնքային շենքերը, փողոցների լուսավորությունը և ջրային ռեսուրսների համակարգերը: Համայնքները կատարյալ թիրախային լսարաններ են, քանի որ նրանք ունեն բարձր Էներգասպառում և Էներգախնայողության ներուժ, նրանք են տեխնոլոգիաների առաջին ներդրողները և նրանց հասանելի են ֆինանսական միջոցներ:
- **Բնակչություն:** Հաղորդակցության ռազմավարությունը և գործողությունների պլանը ուղղված են նաև բնակչությանը, որը Էներգասպառման ամենամեծ խումբն է հանդիսանում և շատ զգայուն է կենսապայմանների և ֆինանսական հնարավորությունների վրա անմիջապես ազդող փոփոխությունների նկատմամբ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ կարելի է զգալիորեն բարելավել Էներգախնայողության մակարդակը և կենսապայմանները: Նման լուծումների և ֆինանսավորման սխեմաների մասին տեղեկացվածության և ըմբռնման բացակայության պայմաններում շատ կարևոր է առաջնահերթություն տալ այս խմբին՝ որպես հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի հիմնական թիրախը:
- **Բիզնես ընկերություններ:** Խոշոր ձեռնարկությունները հիմնականում ունեն իրենց հաստատված և արդյունավետ Էներգասպառման գործընթացները: Իսկ փոքր և միկրո ձեռնարկությունները՝ իրենց չափերի և անկայունության պատճառով, խուսափում են ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրումներից: Միջին ձեռնարկությունները ունեն Էներգասպառման և ծախսերի տևտեսման զգալի ներուժ, ինչը նրանց դարձնում է ՎԷԱ և ԷԱ հաղորդակցության ռազմավարության թիրախային լսարան: Փոքր և միջին չափերի բիզնես ընկերություններին հաղորդակցության գործողություններում ներգրավելով և այդ ոլորտում Էներգետիկ աուդիտի գործառույթը ներդնելով՝ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ընդունումը կարելի է խթանել մատակարարման շղթայում, ինչը կհանգեցնի դրա տարածմանը շատ տարբեր ոլորտներում: Խոշոր ձեռնարկությունները նույնպես թիրախ են դառնալու՝ հիմնականում շուկայի ազատականացումից հետո ստեղծված հնարավորությունների մասին տեղեկացվելու համար:

Ռազմավարությունը ենթադրում է ուղերձների տարբեր ոճեր, օժանդակող նյութերի տարբեր ձևաչափեր, ինչպես նաև սոցիալական ցանցերով արշավներ յուրաքանչյուր թիրախային լսարանի և դրա ենթախմբերի համար: Ներկայացված՝ Աղյուսակ 3-ում:

ԱՂՅՈՒՄԱԿ 3. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՆԹԱԽՄԲԵՐԸ

ԹԻՐԱԽԱՅԻՆ
ԼՍԱՐԱՆ

ԵՆԹԱԽՈՒՄԲ

Համայնքներ

- Համայնքի կառավարման ենթակառուցվածքը ներառում է.
 - Վարչական և համայնքային շենքեր
 - Փողոցային լուսավորություն
 - Ջրային շատրվաններ, հանրային այգիներ և այլն
 - ԾԻԳ-եր
- Համայնքային ոչ-արևտրային կազմակերպություններ
- Կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Բնակչություն

- Բնակիչներ, հատկապես պլանավորված Էներգետիկ նախագծերի իրականացման վայրերում բնակվողներ
- Տնային տնտեսություններ
 - Բազմաբնակարան շենքեր
 - Համատիրություններ, սեփականատերերի ասոցիացիաներ
 - Առանձնատներ
 - Ամառանոցներ
- Դպրոցներ
 - Աշխատակազմ
 - Երիտասարդներ
 - Ծնողներ
 - Կանայք
- Տեղական բանկերի անհատ հաճախորդներ
- ՎԷԱ, ԷԱ տեխնոլոգիաներ, Էներգասպառող սարքեր և սարքավորումներ վաճառող ընկերությունների հաճախորդներ

Բիզնեսներ

- Փոքր և միջինի ձեռնարկություններ
- Խոշոր ընկերություններ
- Տեղական բանկերի գործարար հաճախորդներ

ԳՈՐԾՆԱԿԵՐՆԵՐ

Հաղորդակցության ռազմավարության արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է համագործակցել հիմնական շահագրգիռ կողմերի հետ, որոնք կարող են ազդել Էկոհամակարգի վրա: Այդ գործընկերները որոշիչ դեր են կատարում հանրության ավելի լայն շրջանակներին հասնելու և թիրախային լսարաններին ներգրավելու հարցում: Դրանք են.

- **Որոշումներ կայացնողներ:** Նախարարությունները, համայնքները, պետական և համայնքային կառավարման մարմինները և այլն:
- **Կարծիք ստեղծողներ (ազդեցիկ մարդիկ):** Յուրաքանչյուր համայնքում առանձին վերցրած ինչպես նաև հասարակության լայն շրջանակներում կան անհատներ, որոնց ձայնին և գործողություններին հետևում է հասարակության ստվար զանգված: Հայտնի գիտնականները, մարզիկները, արվեստագետները, մոդելներն ու բլոգերները՝ իրենց

ազդեցությունն ունենան թիրախային լսարանի վրա. այսպիսով նրանք կարող են դառնալ տեղեկատվական արշավի առաջնորդները իրենց լսարաններում: Ազդեցիկ անձինք, որոնք լուսաբանում են կոնկրետ էներգետիկայի կամ տեխնոլոգիաների հետ կապված թեմաներ, կդիտարկվեն որպես հնարավոր գործընկերներ:

- **Երիտասարդություն:** Երիտասարդները ռազմավարական կարևորություն ունեն որպես ապագա որոշում կայացնողներ և քաղաքացիական գործընթացների ակտիվ մասնակիցներ: Երիտասարդների հետ համագործակցությունը և նրանց դերակատարությունը շատ կարևոր են: Դա կարող է ընդլայնել դրական ազդեցություն թողնելու նրանց հնարավորությունները, քարոզարշավին թարմ շունչ հաղորդել ինչպես նաև նորարարական գաղափարներ առաջ բերել:
- **Ֆինանսական հաստատություններ:** Ֆինանսական հաստատություններն ազդում են կոմերցիոն ոլորտի և ազգաբնակչության որոշումների կայացման վրա՝ ՎԷԱ և ԷԱ ներդրումների համար անհրաժեշտ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորման միջոցները հասանելի դարձնելու միջոցով: Այդպիսով հանդիսանալով միջնորդներ, որոնք ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրումների մասին տեղեկատվությունն ու դրանց տարածման մասին ազդակները հասցնում են որոշում կայացնողներին: Ազատ ֆինանսական ռեսուրսների բացակայության պայմաններում, երբ վտանգված են ՎԷԱ և ԷԱ ներդրումները, ինչպես նաև հաղորդակցության միջոցառումների և համակարգված բազմակուսակցային արշավների բացակայության պայմաններում ֆինանսական հաստատություններին անհրաժեշտ է աջակցություն ՎԷԱ և ԷԱ հնարավոր թիրախային լսարանները ներգրավելու համար: Միևնույն ժամանակ, նրանք ունեն նաև ենթակառուցվածք՝ սպասարկելու այն հաճախորդներին, որոնք ցանկանում են օգտվել Էլեկտրաէներգիայի ազատականացված շուկայի ստեղծած հնարավորություններից:
- **ՉԿ-ներ և գիտական համայնք:** Ելակետային իրավիճակի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ համալսարաններում և մասնավոր ընկերություններում աշխատող գիտնականները Հայաստանում կլիմայի փոփոխության վերաբերյալ խորհրդատվության և ճշգրիտ տեղեկատվության ամենավստահելի աղբյուրներից են, և կարող են նշանակալից դերակատարություն ունենալ հաղորդակցության արշավներում: Համագործակցելով գիտնականների հետ և ներգրավելով նրանց համապատասխան միջոցառումների մեջ՝ թիմը կարող է օգտագործել նրանց հեղինակությունն ու փորձը՝ հիմնական թիրախային լսարաններին արդյունավետ կերպով հասնելու և նրանց ներգրավելու համար: Գիտական համայնքը կարող է հանդես գալ որպես հաղորդակցության քարոզարշավի ակտիվ մասնակիցներին կապող օղակ, ինչը կապահովի, որպեսզի ուղերձները լինեն ճշգրիտ, վստահություն ներշնչող և թիրախային լսարանի համար ընկալելի: Ավելին, ակադեմիկոսները կարող են տրամադրել հարուստ գիտելիքներ և նորարարական գաղափարներ, ինչը կարող է բարձրացնել հաղորդակցության ռազմավարության արդյունավետությունը և նպաստել համայնքում դրական փոփոխությունների առաջացմանը:
- **ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներ մատակարար ընկերություններ:** ՎԷԱ և ԷԱ մատակարար և վաճառողների հետ համագործակցությունը կարևոր նշանակություն ունի ՎԷԱ և ԷԱ վերաբերյալ հաղորդակցության արշավում: Ապացուցված է, որ արևային ընկերությունների իրականացրած ակտիվ հաղորդակցության արշավները ՏԿԵՆ-ի կողմից «կանաչ» տեխնոլոգիաների կիրառման համար տրամադրվող խթանների վերաբերյալ, հանգեցրել են ՎԷԱ լուծումների տարածմանը:

Մատակարար/վաճառող ընկերությունները լավ պատկերացում ունեն այդ տեխնոլոգիաների մասին և կարող են դրանց առավելությունների մասին արժեքավոր տեղեկատվություն տրամադրել թիրախային լսարանին: Բացի այդ, նրանք կարող են գործնական լուծումներ առաջարկել և ֆինանսավորման տարբերակներ, որոնք կօգնեն հաղթահարել ֆինանսական սահմանափակումները/արգելքները/խոչընդոտները՝ հետագայում նպաստելով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների տարածմանը: Համագործակցելով ՎԷԱ և ԷԱ մատակարար/վաճառող ընկերությունների հետ՝ նրանց փորձը, ռեսուրսները և հաճախորդներին հասնելու առկա ուղիները կարելի է օգտագործել՝ արդյունավետորեն հասնելու և ներգրավելու թիրախային լսարանները՝ համայնքում առաջացնելով դրական փոփոխություններ:

- **Լրատվամիջոցներ:** Լրատվամիջոցները որոշիչ դեր են խաղում թիրախային լսարանների վրա ազդելու գործում, քանի որ կարող են ձևավորել հասարակական կարծիք և Էներգետիկ հարցերի շուրջ կարող են հանրային քննարկումներ ձևավորել: Համագործակցելով լրատվամիջոցների հետ՝ Ծրագիրը կարող է ստեղծել համագործակցության միջավայր, որն աջակցում և ընդլայնում է քարոզարշավի ուղերձների ազդեցությունը՝ հասնելով ավելի լայն լսարանի և, ի վերջո, ունենալով ավելի մեծ ազդեցություն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Երկու հիմնական ուղերձ է պետք հասցնել թիրախային լսարաններին.

- ԷԱ ներդրումները ետ են գնվում,
- Ինքնավար Էներգաարտադրողները նոր սպառողներ են:

Հաշվի առնելով, որ թիրախային լսարանները տարբեր ենթախմբերից են բաղկացած, հիմնական ուղերձների ձևակերպումները յուրաքանչյուր ենթախմբի համար կտարբերվեն:

Համայնքներ: 70%-ից ավելի համայնքներում բացակայում են Էներգետիկ տվյալների բազաներ և Էներգետիկ կառավարիչներ: Ավելին, համայնքներում հայտնաբերվել են խմբային հաշվառման կազմակերպման կարողությունների բացեր : Առաջին հինգ կարևոր միջոցառումները, որոնց առաջնահերթություն են տալիս համայնքներում ներդրումներ կատարելիս՝ զբոսաշրջային գրավչության բարելավումն է, համայնքի բյուջեի օպտիմալացումը, համայնքային ծառայությունների որակի բարձրացումը, համայնքի Էկոլոգիական միջավայրի բարելավումը և սոցիալապես խոցելի խմբերի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Այսպիսով, հաղորդակցության ուղերձներն են.

- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելը հնարավորություն է ընձեռում միջոցներ տնտեսել՝ համայնքներում այլ նպատակներով ծախսելու համար և բարելավել համայնքների կողմից մատուցվող ծառայությունները,
- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներում ներդրումներ կատարելը բարձրացնում է քաղաքացիների բարեկեցության աստիճանը,
- ՎԷԱ և ԷԱ լուծումները բարելավում են շրջակա միջավայրը և մեղմում կլիմայի փոփոխության ազդեցությունը:

Բնակչություն: Համայնքների շրջանում անցկացված հետազոտության արդյունքների համաձայն՝ ՎԷԱ տեխնոլոգիաների և դրանց առավելությունների մասին որոշ չափով տեղեկացված է ընդհանուր բնակչության 77.3%-ը, 6.1%-ը տեղյակ չէ, իսկ ԷԱ տեխնոլոգիաների և միջոցառումների մասին տեղեկացված է 74.2%-ը և 3%-ը տեղյակ չէ: Բնակչության շրջանում անցկացված մեկ այլ հարցում¹ ցույց է տվել, որ ՎԷԱ համակարգերի ներդրման դանդաղ տեմպը կարող է պայմանավորված լինել ֆինանսական սահմանափակումներով և դրանց ոչ մատչելի լինելու հանգամանքով, ինչը վկայում է աջակցության և ներդրումային սխեմաների վերաբերյալ իրազեկվածության և կարողությունների բացակայության մասին (ավելի մանրամասն տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՀԻՄՆԱՐԱՐ) : Քանի որ բնակչության հասանելի են տարբեր սխեմաներ՝ կախված զբաղեցրած բնակարանի տեսակից, հաղորդակցության ուղերձները կտարբերվեն: Այսպիսով, բնակչությանն ուղղված ուղերձները հետևյալն են:

- Բազմաբնակարան շենքերի բնակիչներ՝
 - ՎԷԱ և ԷԱ միջոցառումները մատչելի են, եթե գիտես, թե որքան ես տնտեսում,
 - ԷԱ միջոցառումների շնորհիվ կարելի է Էներգիա և գումար տնտեսել, բարձրացնել բարեկեցության աստիճանը, հարմարավետության մակարդակը և գույքի արժեքը,
 - խմբային հաշվառումը բազմաբնակարան շենքերի դեպքում կփոխհատուցի շենքի Էներգասպառման ծախսերը:
- Առանձնատների բնակիչներ՝
 - ՎԷԱ և ԷԱ միջոցառումները մատչելի են, եթե գիտես, թե որքան ես տնտեսում,
 - ԷԱ միջոցառումների շնորհիվ կարելի է Էներգիա և գումար խնայել, բարձրացնել բարեկեցության ու հարմարավետության մակարդակը և գույքի արժեքը,
 - ՎԷԱ տեխնոլոգիաներում ներդրումը թույլ է տալիս արևի միջոցով վճարել հաշիվները:

Բիզնեսներ:

- Նույնիսկ ՎԷԱ և ԷԱ ներդրումը ապահովում է ետգնում,
- Էներգետիկ աուդիտից սկսելով՝ կարելի է ավելի շատ տնտեսել և ավելիքիչ կորցնել,
- Ռեալիզացրեք Ձեր բիզնեսի ներուժը ազատականացված էլեկտրաէներգետիկական շուկայի միջոցով:

1 BREAVIS, «Westminster Foundation for Democracy» հիմնադրամի կողմից կատարված՝ Բնապահպանական խնդիրների ուսումնասիրություն Հայաստանում՝ կլիմայի փոփոխության և վերականգնվող էներգիայի մասին հանրային կարծիքի ուսումնասիրություն: Հարցումն իրականացվել է 2022թ. դեկտեմբերի 6-13: Վերջնական ընտրանքը՝ 1022 հարցում : Տվյալները հավաքագրվել են անմիջապես հարցվողներից՝ հեռախոսազանգերի միջոցով:

Բոլոր ուղերձները, որոնք ուղղված են բիզնես ընկերություններին, պետք է պատկերավոր եղանակով ներկայացնեն Էներգետիկ աուդիտից, ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներից և լուծումներից ակնկալվող օգուտները: Բոլոր հնարավոր դեպքերում, հստակ պետք է նշվեն գործունեության կոնկրետ ոլորտը և թիրախային լսարանի բիզնեսի չափը՝ լսարանի ներգրավվածության, ինչպես նաև կապի զգացում հաղորդելու համար: Բոլոր հնարավոր և համապատասխան դեպքերում հաղորդակցության միջոցով գործողությունների և հետագա քայլերի կոչ պետք է արվի: Հիմնվելով իրականացված հարցումների վերլուծության վրա ընտրվել են հետևյալ հիմնական թեմաները, որոնք ամենաշատ իրազեկման կարիքն ունեն.

- ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրումից ակնկալվող ֆինանսական օգուտները,
- կոնկրետ օգուտներ, որոնք բխում են ՎԷԱ և ԷԱ սարքավորումների ձեռքբերումից, օրինակ՝ «կանաչ արտադրանքների» համար եվրոպական և ամերիկյան շուկաներ մուտք գործելու հնարավորությունները,
- Էներգետիկ անվտանգությունը:

Այս բացահայտումներն օգնում են սահմանել տարբեր լսարանների հետ աշխատելու համար հիմնական և օժանդակ ուղերձները:


Ստորև նշված հեշթեգերի օգտագործումը տարբեր թեմաների համատեքստում հնարավորություն կընձեռի թիրախային լսարաններին հեշտորեն ավելի շատ տեղեկատվություն որոնել և խորանալ թեմայի մեջ: Հեշթեգերի օրինակներ են՝ #ՎԷԱ, #ԷԱ, #Էներգաարդյունավետություն, #Էներգախնայողություն #արևայինԷներգիա #Էներգետիկա և այլն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Թիրախային լսարանների հետ արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար պետք է ընտրել և յուրաքանչյուր խմբի համար ադապտացնել կոնկրետ ուղերձներ և հաղորդակցության ուղիներ, որոնք կապահովեն ուղերձների տարածման արդյունավետությունը և ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Կատարված հետազոտությունների համաձայն², բնակչության 70%-ը, հատկապես գյուղական վայրերում, Էներգետիկայի ոլորտին վերաբերող տեղեկատվություն է ստանում հեռուստատեսության միջոցով: Իսկ Երևանի ու այլ քաղաքների բնակիչները Էներգետիկային վերաբերող տեղեկատվություն հիմնականում ստանում են առցանց, հատկապես սոցիալական ցանցերի միջոցով: Համայնքներում անցկացված հարցումների հիման վրա նշվել է, որ բնակիչներին հասնելու ամենաարդյունավետ ուղիներն են սոցիալական ցանցերը, պաշտոնական կայքերը, հանրային միջոցառումները, հեռուստատեսությունը և անձնական շփումը, ինչպես ներկայացված է Գծապատկեր 1-ում:

² ՀԾԿՀ հաղորդակցության ռազմավարություն

Գծապատկեր 1: ՎԷ/ԷԱ տարածմանն ուղղված հաղորդակցության ուղիները



Վերոհիշյալ բացահայտումներն ընդգծում են սոցիալական մեդիայի ակտիվ օգտագործման անհրաժեշտությունը բոլոր տեսակի ուղերձների տարածման և լուսաբանման համար: Ուստի, համապատասխան թիրախային լսարաններին ուղերձներ և տեղեկատվություն հասցնելու նպատակով պետք է օգտագործվեն գործընկերի սոցիալական մեդիա ալիքները, բացի ՏԿԵՆ-ի կայքից և սոցիալական մեդիա հարթակներից: Սոցիալական մեդիայի մասով հիմնական գործընկերներն են ԱՄՆ ՄՁԳ Հայաստանը, Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության հիմնադրամը (ՀՎԷԷՀ) և էներգախնայողության հիմնադրամը (ԷԽՀ): Այդուհանդերձ 4-ում ներկայացված են յուրաքանչյուր լսարանի համար նախատեսված հաղորդակցության ուղիները, գործընկերները և գործիքները:

ԱՐՅՈՒՄԱԿ 4. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ԳՈՐԾՆԱԿԵՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

ԼՍԱՐԱՆ	ՈՒՂԻՆԵՐ	ԳՈՐԾՆԱԿԵՐՆԵՐ	ԳՈՐԾԻՔՆԵՐ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	Ուղղակի հաղորդակցություն Առցանց հրապարակումներ Սոցիալական ցանցեր	ՏԿԵՆ, որոշում կայացնողներ ԱՄՆ ՄՁԳ, ՀՎԷԷՀ, ՀԾԿՀ, ԷԽՀ ՎԷԱ և ԷԱ մատակարար/վաճառողներ Լրատվամիջոցներ ՀԿ-ներ/Գիտական համայնք	Հանդիպումներ Քննարկումներ, շնորհանդեսներ, համաժողովներ Տեղեկատվական արշավներ Տեղեկատվական և ուսուցողական նյութեր Մրցույթներ Հանրային միջոցառումներ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	Ավանդական լրատվամիջոցներ Առցանց հրապարակումներ Սոցիալական ցանցեր	ՏԿԵՆ, որոշում կայացնողներ ԱՄՆ ՄՁԳ, ՀՎԷԷՀ, ՀԾԿՀ, ԷԽՀ ՎԷԱ և ԷԱ մատակարար/վաճառողներ Լրատվամիջոցներ ՀԿ-ներ/Գիտական համայնք	Հեռուստատեսային թոք-շոուներ Լուրեր Առցանց հրապարակումներ, բլոգեր և վլոգեր Տեղեկատվական և ուսուցողական նյութեր, օրինակ՝ անիմացիոն տեսանյութեր, ՎԷԱ և ԷԱ նյութեր սկսնակների համար Մրցույթներ (դպրոցների և համայնքների ներգրավմամբ) Ցուցադրություններ
ԲԻՉՆԵՍՆԵՐ	Ավանդական լրատվամիջոցներ Ուղիղ հաղորդակցություն Սոցիալական ցանցեր Հանրային միջոցառումներ	Ֆինանսական հաստատություններ ԱՄՆ ՄՁԳ, ՀՎԷԷՀ, ՀԾԿՀ, ԷԽՀ ՎԷԱ և ԷԱ մատակարար/վաճառողներ Լրատվամիջոցներ	Ոլորտի վերաբերյալ դասընթացներ Հաջողության պատմություններ Սթորիթելինգ Ուսուցողական նյութեր, օրինակ՝ անիմացիոն տեսանյութեր, ՎԷԱ և ԷԱ-ն սկսնակների համար, ուղեցույցներ Հարցազրույցներ Մրցույթներ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ (MEL)

Հաղորդակցության քարոզարշավի մշտադիտարկումը և գնահատումը դրա արդյունավետությունը ստուգելու հիմնական գործիքներն են: Քարոզարշավի ընթացքում լսարանները, ուղերձները և գործողությունները կարող են փոփոխվել՝ կախված ներքին կամ արտաքին գործոններից, այդ թվում և ոչ միայն՝ շահագրգիռ կողմերի առաջնահերթություններից, որոշակի լսարաններին հասնելու հնարավորությունից կամ քարոզարշավի ընթացիկ առաջընթացի գնահատման արդյունքներից: Հետևաբար, ելնելով Ծրագրի մշտադիտարկման, գնահատման և փորձի ամփոփման համակարգի պահանջներից, կիրականացվի քարոզարշավի առաջընթացի և ձեռքբերված փորձի

մշտադիտարկում և գնահատում: Արշավի ընթացքում իրականացված գործողությունների մշտադիտարկումը, հաջողությունների ու մարտահրավերների բացահայտումն ու գնահատումը հնարավորություն կտան սովորել և հարմարվել կոնկրետ պայմաններին: Արդյունքում, հնարավոր կլինի քարոզարշավի ողջ ընթացքում ապահովել դրա արդյունավետությունը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Օգտվելով Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի մշտադիտարկման, գնահատման և փորձի ամփոփման պլանում նշված արդյունավետության ցուցանիշներից՝ հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի շրջանակում կառաջարկվեն առաջընթացը գնահատելու նոր ցուցանիշներ: Յուրաքանչյուր գործողություն, թիրախային լսարան կամ հաղորդակցության ուղի գնահատելու համար կիրառվելու են առանձին ցուցանիշներ: Օրինակ, վերականգնվող էներգիայի նոր տեղադրված հզորությունների քանակը կօգտագործվի որպես տվյալ համայնքի թիրախային լսարանի ցուցանիշ՝ հասկանալու համար արդյոք քարոզարշավի ազդեցության շնորհիվ են տեղադրվել նոր ՎԷԱ համակարգերը և ինչպես է այն ազդել: Գործընկեր համայնքներին կտրամադրվեն խորհրդատվություններ Էլեկտրոնային փոստի, հանդիպումների կամ հարցումների միջոցով՝ պարզելու, թե որքան նոր հզորություններ են տեղադրվել քարոզարշավը մեկնարկելուց հետո, և հիմնավորելու արշավի դերը նոր հզորությունների խթանման գործում: Սա կարող է ներառել նաև փաստաթղթերի հավաքագրում Էլեկտրոնային նամակներից կամ հարցումների արդյունքներից: Որպես այլընտրանք, կարելի է հաշվել և գրանցել սոցիալական կայքերում փոխազդեցությունների թվաքանակը:

Աղյուսակ 5-ում ներկայացված են բոլոր ցուցանիշներն ըստ հաղորդակցման քարոզարշավից ակնկալվող հիմնական արդյունքների: Բացի այս ցուցանիշներից, մշտադիտարկման նպատակով կիրառվելու են նաև այլ մեթոդներ, ներառյալ.

- **Հարցում:** ՎԷԱ կամ ԷԱ վերաբերյալ կարծիքների, տեղեկացվածության աստիճանի, ժամանակի ընթացքում դրանց ներդրման առաջընթացի մասին կիրականացվեն հարցումներ: Օրինակ, ելակետային իրավիճակի գնահատման շրջանակներում առավելագույնը տարին մեկ անգամ համայնքներում կիրականացվեն հարցումներ՝ գնահատելու մաքուր էներգիայի տեխնոլոգիաների մասին իրազեկվածության և ընկալման հարցում այդ համայնքներում գրանցված առաջընթացը: Հետազոտության արդյունքները ապահով կպահպանվեն և կմնան անանուն՝ արդյունքները շահագրգիռ կողմերին տրամադրելու դեպքում:
- **Կոնտեքստային մշտադիտարկում:** Հաղորդակցության արշավի առաջընթացի մասին մանրամասն որակյալ տեղեկատվություն ստանալու համար կներգրավվեն գործընկերներ ՀՀ կառավարությունից, այլ դոնոր կազմակերպություններից և շահագրգիռ հաստատություններից: Նման մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ նաև թիրախային այլ լսարաններից, ինչպես նաև հանդիպումների կամ գրավոր հարցումների միջոցով:

Մշտադիտարկման արդյունքում հավաքագրված տվյալները կստուգվեն՝ բացերն ու արտառոց արդյունքները բացառելու, համապատասխանությունը հաստատելու համար և պահուստային փաստաթղթերի հետ միասին կպահվեն առցանց հարթակում առնվազն եռամսյակային կտրվածքով: Տվյալները կներկայացվեն եռամսյակային և տարեկան հաշվետվությունների միջոցով: Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի

մշտադիտարկման, գնահատման և փորձի ամփոփման պլանը նույնպես կարող է օգտագործվել որպես նման գործընթացների ուղեցույց:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տվյալները հավաքագրվելուց, հաստատվելուց և պահպանվելուց հետո կգնահատվեն՝ հասկանալու համար հաղորդակցության արշավի արդյունավետությունը: Օրինակ՝ քարոզարշավը պարբերաբար կգնահատի տվյալների հավաքագրման, հետազոտությունների և բովանդակության մշտադիտարկման արդյունքները տվյալների վերլուծության և վիզուալիզացման միջոցով՝ հասկանալու համար, թե որ միջամտությունն է լավ աշխատում, արդյոք նպատակները կատարվում են, և ինչով են պայմանավորված բացթողումները կամ մարտահրավերները:

ՓՈՐՁԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հաղորդակցության արշավը կօգտագործի գնահատման արդյունքները՝ եզրակացություններ կատարելու և անհրաժեշտության դեպքում արշավում փոփոխությունների համար: Արշավի առաջընթացի վերաբերյալ տվյալները վերլուծելուց հետո, թիմը կքննարկի, թե արդյոք անհրաժեշտ է կատարել փոփոխություններ ուղերձների ձևակերպման, թիրախային լսարանների և գործընկերների հետ փոխգործակցության հետ կապված, որտեղ և երբ պետք է օգտագործվեն ռեսուրսները, և արդյոք կա այլ գործընկերներ ներգրավելու կարիք թե ոչ: Եզրակացությունները կարող են ներկայացվել եռամսյակային և տարեկան կամ արտահերթ հաշվետվություններում և փոխանցվել շահագրգիռ կողմերին, ներառյալ ՀՀ կառավարությանը և այլ տեղական կազմակերպություններին: Եզրակացությունները կարող են հանգեցնել հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի փոփոխության:

ԱՐՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ, ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄ

#	ՑՈՒՑԱՆԻՇ	ՎԷՄ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄ	ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ ՍՏԱՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՄՆԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ	ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԿԱՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅ ԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՉԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ	ԷԼԵԿՏՐՈՎԵՆԵՐԳԵՏԻԿԱԿ ԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՉՄԱՍԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԸՆԿԱԼՈՒՄ
1	Տեղադրված ՎԷՄ արտադրական հզորություններ	V	V		Միավոր՝ ՄՎտ Հիմք՝ ստանալ տվյալներ համայնքային կառավարման մարմիններից, բանկերից և ֆինանսական հաստատություններից, մատակարար/վաճառողներից՝ թիրախային խմբերին վերաբերող նոր ՎԷՄ նախագծերի վերաբերյալ փաստաթղթեր հավաքագրելու համար, օգտագործել անհատական 1:1 հաղորդակցություն/հարցում, համադրել ՀԾԿՀ տվյալների հետ Հաճախականություն՝ եռամսյակային Տարբերակում՝ ըստ տեխնոլոգիայի տեսակի (օրինակ՝ արևային)
2	Կանխատեսվող էներգախնայողությամբ ն չափ	V	V		Միավոր՝ ՄՎտժ Հիմք՝ ստանալ տվյալներ համայնքային կառավարման

ԱՐՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

						<p>մարմիններից, բանկերից և ֆինանսական հաստատություններից, մատակարար/վաճառողներից՝ թիրախային խմբերին վերաբերող Նոր ԷԱ նախագծերի արդյունքում առաջացած ինսյուրդությունների վերաբերյալ փաստաթղթեր հավաքագրելու համար, օգտագործել անհատական հաղորդակցություն/հարցում, համադրել Էներգիայի սպառումը բիզնեսի սովորական սպառման սցենարների հետ</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
3	Ջերմոցային գազերի արտանետումների կանխատեսվող կրճատում շնորհիվ մաքուր էներգիայի վերաբերյալ ընդունված օրենքների, կանոնակարգերի, կարգավորումների կամ տեխնոլոգիաների կիրառման	V		V		<p>Միավոր՝ Մեգատոննա CO2e</p> <p>Հիմք՝ ստանալ տվյալներ համայնքային կառավարման մարմիններից, բանկերից և ֆինանսական հաստատություններից, մատակարար/վաճառողներից՝ Նոր ՎԷԱ և ԷԱ նախագծերի վերաբերյալ փաստաթղթեր հավաքագրելու համար, օգտագործել անհատական հաղորդակցություն/հարցում, հաշվել արտանետումների քանակը համեմատած բիզնեսի սովորական սցենարի հետ, կիրառել USAID CLEER tool գործիքը</p> <p>Հաճախականություն՝ տարեկան</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
4	Նոր Էներգետիկ նախագծերի քանակը, որոնք նախագծվել կամ իրականացվել են	V		V	V	<p>Միավոր՝ նախագծերի քանակ</p> <p>Հիմք՝ ստանալ տվյալներ համայնքային կառավարման մարմիններից, բանկերից և ֆինանսական</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

<p>հաղորդակցության արշավի շնորհիվ</p>					<p>հաստատություններից, մատակարար/վաճառողներից՝ Նոր ՎԷԱ և ԷԱ Նախագծերի վերաբերյալ փաստաթղթեր հավաքագրելու համար, օգտագործել անփնական հաղորդակցություն/հարցում, համադրելի ՅՇԿՅ տվյալների հետ</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ Նախագծի տեսակ (ՎԷԱ, ԷԱ)</p>
<p>5 Նոր ՎԷԱ և ԷԱ Նախագծերի համար պետական աջակցություն ստանալու հայտերի քանակ</p>	V			V	<p>Միավոր՝ հայտերի քանակ</p> <p>Հիմք՝ տվյալներ հավաքագրել ՏԿԵՆ-ի տվյալների բազայից, հայտատուներից տեղեկանալ արդյոք նրանք որևէ կերպ ներգրավվել են հաղորդակցության արշավում</p> <p>Հաճախականություն՝ տարեկան</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
<p>6 Բարելավված Էներգետիկ ծառայություններից օգտվող շահառուների թվաքանակ</p>	V	V			<p>Միավոր՝ մարդկանց թվաքանակ</p> <p>Հիմք՝ ստանալ տվյալներ համայնքային կառավարման մարմիններից, Հայաստանի կառավարության գործընկերներից, դոնորներից և ՓՄՁ համակարգող կառույցներից Նոր տեղադրված ՎԷԱ կամ ԷԱ սարքավորում օգտագործող քաղաքացիների քանակի վերաբերյալ, օգտագործել անձնական հաղորդակցություն/հարցում</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ գենդերային (կին/տղամարդ), տարիք (մինչև 30 տարեկան, 30-ից բարձր)</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՎՍՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

7	Ֆինանսական հաստատությունների կողմից ՎԷԱ և ԷԱ ֆինանսավորման համար տրամադրված վարկերի կամ կնքված գործարքների քանակ	V	V	<p>Միավոր՝ վարկերի քանակ</p> <p>Հիմք՝ տվյալներ բանկերից և ֆինանսական հաստատություններից նոր ՎԷԱ և ԷԱ նախագծերի ֆինանսավորման վերաբերյալ, օգտագործել անփնական հաղորդակցություն/հարցում</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
8	Նոր ձևավորված ինքնավար Էներգաարտադրողների խմբերի քանակ	V		<p>Միավոր՝ խմբերի քանակ</p> <p>Հիմք՝ պահանջել տվյալներ ՀԷՑ-ից նոր ձևավորված խմբերի մասին, համադրել հաղորդակցության արշավի գործողություններին կամ միջոցառումներին այդ խմբերի մասնակցության մասին տեղեկատվության հետ</p> <p>Հաճախականություն՝ տարեկան</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
9	Էներգետիկ հարցերի շուրջ տեխնիկապես վերապատրաստված մարդկանց թվաքանակ	V		<p>Միավոր՝ մարդկանց թվաքանակ</p> <p>Հիմք՝ պահանջել տվյալներ ՎԷԱ և ԷԱ թեմաների շուրջ կազմակերպված դասընթացների մասնակիցների մասին, օգտվել ստորագրության/մասնակցության թերթիկներից կամ այլ տվյալներից</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ գեներային (կին/տղամարդ), տարիք (մինչև 30 տարեկան, 30-ից բարձր)</p>
10	Թիրախային լսարանների հետ թվային	V	V	<p>Միավոր՝ թվային հպումների քանակ</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

<p>շփումների/հպումներ ի քանակ</p>			<p>Հիմք՝ սոցիալական կայքերում հաղորդակցության արձավիկյութերի դիտումների, ներբեռնումների, հավանությունների ու մեկնաբանությունների քանակի վերաբերյալ: ըստ անհրաժեշտության նախաձեռնել քննարկում այն գործընկերների հետ, ում տեղեկատվական ռեսուրսներում են հրապարակված կյութերը</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
<p>11 Մշակված ուսուցողական կյութերի քանակ</p>	V		<p>Միավոր՝ ուսուցողական կյութերի քանակ</p> <p>Հիմք՝ մշակված կյութերի քանակ, որոնք պարունակում են ՎԷԱ և ԷԱ վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ՝ ուղեցույցներ, խորհուրդներ, անիմացիոն տեսանյութեր և այլն</p> <p>Հաճախականություն՝ տարեկան</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
<p>12 ՎԷԱ և ԷԱ մրցույթներին, հաղորդակցության միջոցառումներին մասնակցելու հայտերի քանակ</p>	V		<p>Միավոր՝ հայտերի քանակ</p> <p>Հիմք՝ մրցույթներում, ներառյալ համայնքային ցուցադրական մրցույթներում մասնակցելու հայտեր</p> <p>Հաճախականություն՝ տարեկան</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
<p>13 Հաղորդակցության արձավիկ շրջանակներում իրականացված</p>	V	V	<p>Միավոր՝ միջոցառումների քանակ</p> <p>Հիմք՝ հաղորդակցության արձավիկ շնորհիվ իրականացված միջոցառումների քանակ, ներառյալ դասընթացներ, հանրային</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

միջոցառումների քանակ					<p>ցուցադրություններ ու ցուցահանդեսներ, մեդիա շրջայցեր և այլ հանդիպումներ թիրախային լսարանի հետ</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
14 Միջոցառումների մասնակիցների թվաքանակ			V	V	<p>Միավոր՝ մասնակիցների թվաքանակ</p> <p>Հիմք՝ տվյալներ ցուցակիչ 13-ի միջոցով գնահատվող միջոցառումների մասնակիցների մասին, օգտվել ստորագրության/մասնակցության թերթիկներից կամ հպումների հաշվիչի տվյալներից</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ գենդերային (կին/տղամարդ), տարիք (մինչև 30 տարեկան, 30 տարեկանից բարձր)</p>
15 Էներգախնայողության միջոցառումներում ներգրավված համայնքային շենքերի քանակ	V	V	V		<p>Միավոր՝ շենքերի քանակ</p> <p>Հիմք՝ համայնքներից ստանալ տվյալներ Էներգախնայողության միջոցառումներին մասնակցող համայնքային շենքերի քանակի մասին, օգտագործել անձնական հաղորդակցություն/հարցում</p> <p>Հաճախականություն՝ եռամսյակային</p> <p>Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
16 ՎԷԱ և ԷԱ թեմաների շուրջ հեռուստատեսային լուսաբանման քանակ			V		<p>Միավոր՝ հեռուստատեսային լուսաբանման դեպքերի քանակ</p> <p>Հիմք՝ արձանագրել հեռուստատեսությամբ ներկայացված ՎԷԱ և ԷԱ ինտեգրման դեպքերը, ներառյալ,</p>

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

				<p>բայց ոչ միայն հեռուստասերիալների, որոնց հետ քարոզարշավը համագործակցում է, հարցազրույցները, զեկույցները և տեղեկատվական արշավի գործողությունների մասին այլ լուսաբանման դեպքերը, անհրաժեշտության դեպքում պահանջել դիտումների մասին տվյալներ հեռուստաալիքներից կամ հեռարձակող կազմակերպությունից</p> <p>Հաճախականություն՝ տարեկան Տարբերակում՝ կիրառելի չէ</p>
17	Ազատականացված շուկայի նոր մասնակիցների թվաքանակ	V	V	<p>Միավոր՝ շուկայի նոր մասնակիցների թվաքանակ</p> <p>Հիմք՝ ազատականացված շուկայի նոր մասնակիցների թվաքանակի մասին տվյալներ պահանջել էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորից, հնարավորինս համադրել հաղորդակցության արշավի գործողություններում այդ մասնակիցների ներգրավվածությունը</p> <p>Հաճախականություն՝ տարեկան Տարբերակում՝ կիրառելի չէ</p>

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Այս բաժնում ներկայացված է գործողությունների պլանը, որը պարունակում է հաղորդակցության արշավի շրջանակներում նախատեսված բոլոր գործողությունները: Գործողությունները որոշվել են ելակետային իրավիճակի գնահատման ու հաղորդակցության ռազմավարության շրջանակի հիման վրա: Գործողություններն առաջարկվում են ըստ թիրախային լսարանների, այնուհետև ամփոփվում են աղյուսակի ձևաչափով Հավելված Ա-ում: Առաջարկվող գործողություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կնպաստեն ԵՎԷԱԾ/ԵԳԱՊ թիրախներին և նպատակներին հասնելուն: Հավելված Բ-ում ներկայացված է 2023-2024թթ գործողությունների պլանը:

Գործողությունները ներկայացված են բարձր կամ ցածր առաջնահերթությամբ՝ ելնելով դրանց ազդեցությունից, իրականացման հետ կապված դժվարություններից և պահանջվող ռեսուրսներից: Օրինակ՝ այն գործողություններին, որոնք ունեն բարձր ազդեցություն, սակայն դրանց իրականացումը պայմանավորված չէ դժվարությունների կամ շատ ռեսուրսների հետ, տրվում է բարձր առաջնահերթություն, մինչդեռ այն գործողություններին, որոնք ունեն բարձր ազդեցություն և պայմանավորված են մեծ դժվարությունների և ռեսուրսների ներդրման հետ, տրվում է ցածր առաջնահերթություն: Հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի իրականացման համար առաջին հերթին դիտարկվում են բարձր առաջնահերթություն ունեցող գործողությունները, իսկ ցածր առաջնահերթություն ունեցող գործողությունները դիտարկվում են միայն առաջիններն ավարտելուց հետո՝ համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 1. ԹՎԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Խնդիր/Հիմնավորում: Ելակետային իրավիճակի գնահատման համաձայն, համայնքների համար առաջնահերթ գործողությունների ցանկը ներառում է փողոցային լուսավորության արդիականացումը (68%) և ընդլայնումը (65%), համայնքների կարիքները բավարարելու համար, ՎԷԱ արտադրության ներդրումը (68%) և հասարակական շենքերի ԷԱ բարելավումը (55%): Այնուամենայնիվ, ՎԷԱ և ԷԱ նախագծերի իրականացումը դեռևս անձանոթ ոլորտ է համայնքների համար, ինչը պայմանավորված է հետևյալով (ավելի մանրամասն տե՛ս Հավելված Գ)։

- Համապարփակ Էներգետիկ տվյալների շտեմարանի և հաշվեկշռի բացակայություն, , Էներգետիկ կառավարման կոմիտեի և համապատասխան գործընթացները համակարգող Էներգետիկ կառավարչի բացակայություն, ինչը համայնքներին թույլ չի տալիս բացահայտել բարելավման ենթակա ոլորտները,
- Համայնքի անձնակազմի շրջանում ՎԷԱ և ԷԱ առավելությունների մասին ընդհանուր գիտելիքների պակաս և թերի ընկալում, նման նախագծերի մշակման և կառավարման համար անհրաժեշտ կարողությունների պակաս,
- ՎԷԱ կիրառման և ԷԱ միջոցառումների վերաբերյալ ուղեցույցների բացակայություն ոչ մասնագետների համար,
- Համայնքներում ՎԷԱ և ԷԱ ինտեգրման արդյունավետությունը գնահատելու մեթոդների և գործիքների բացակայություն, որոնք բոլոր շահագրգիռ կողմերին

հնարավորություն կտան այդ ինտեգրումից քաղված դասերի մասին պատկերացում կազմել:

Առաջարկվող գործողություններ: Վերոնշյալ բացերը լրացնելու համար նախատեսվում է մշակել ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր (ինֆոգրաֆիկայով, ճանապարհային քարտեզով և այլն) հետևյալի վերաբերյալ.

- ԷԱ և ԷԽ լուծումների կիրառումը համայնքներում (ներառյալ ֆինանսավորման սխեմաները),
- ՎԷԱ օգտագործումը համայնքի կառավարման համար,
- Ինչպես իրականացնել ՎԷԱ և ԷԱ նախագծեր գնումներ,
- Ինչպես մշտադիտարկել և գնահատել ՎԷԱ և ԷԱ ինտեգրման արդյունքները (տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական):

Առաջարկվող ուղեցույցները ցույց կտան, որ ՎԷԱ և ԷԱ միջոցառումներին ուղղված ներդրումները համահունչ են համայնքների առաջնահերթ ներդրումային կարիքներին: Ցուցադրելով ներդրումների դրական արդյունքները, ներառյալ համայնքային ծառայությունների որակի բարելավումը, բյուջեի ծախսերի կրճատումը կամ օպտիմալացումը և զբոսաշրջության գրավչության աճը, այս գործողությունը նպատակ ունի խրախուսել համայնքներում «խելացի» ՎԷԱ և ԷԱ ներդրումներին բարձր առաջնահերթություն տալը, և նպաստել ԷՎԷԱԾ/ԷԳԱՊ նպատակների իրականացմանը: Ուղեցույցները մշակվելու են օգտագործողի համար հարմար և մատչելի ձևաչափով, դրանք կլինեն հասանելի և հասկանալի համայնքի անդամների համար:

Նախատեսվում է մշակել ՏԿԵՆ-ի հետ համաձայնեցված օրինակելի ձևանմուշներ տարբեր Էներգետիկ նախագծերի, ներառյալ՝ փողոցային լուսավորության արդիականացման, գետնի և տանիքի վրա տեղադրվող արևային ֆոտովոլտային համակարգերի ներդրման, հանրային շենքերում ԷԱ միջոցառումների իրականացման և ՎԷԱ և ԷԱ լուծումների ինտեգրման համար, պետական բյուջեից համայնքներին հասանելի սուբվենցիոն ծրագրերին դիմելու նպատակով (Կառավարության N1708-Ն որոշում): Այս ձևանմուշները կծառայեն որպես համայնքային Էներգետիկ նախագծերի մշակման համար օրինակելի ուղեցույցներ: Տեղեկատվությունը հասանելի կլինի ՏԿԵՆ-ի և ՀՎԷԷՀ-ի կայքերում և սոցիալական մեդիա հարթակներում, իսկ նորությունները կներկայացվեն հեռուստատեսության միջոցով: Ձևանմուշների մասին իրազեկման նպատակով կառաջարկվեն առցանց հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ ըստ անհրաժեշտության:

Նպատակ: Առաջացնել հետաքրքրություն և համայնքներին ուղղորդել ՎԷԱ և ԷԱ նախագծերի նախագծման և տեղադրման հարցերի շուրջ, նպաստել համայնքների կարիքների համար ՎԷ արտադրության զարգացմանը, Էներգախնայողությանը, դյուրացնել սուբվենցիոն ծրագրերին դիմելու գործընթացը:

Կանանց և երիտասարդության ներառականություն: Ուղեցույցները և ձևանմուշները ՎԷԱ և ԷԱ համայնքային ծրագրերի իրականացման տեխնիկական փաստաթղթեր են, որոնք նախատեսված են համայնքի մասնագետների կողմից օգտագործելու համար և չպետք է ունենան գենդերային կողմնակալություն:

Առաջնահերթություն: Բարձր

Հաղորդակցության ուղիներ: Առցանց հաղորդակցություն, հեռուստատեսություն

Գործիքներ: Ուսուցողական նյութեր (Էլեկտրոնային ուղեցույցներ և ՎԷԱ և ԷԱ նախագծերի ձևանմուշներ), ՏԿԵՆ-ի և ՀՎԷԷՀ-ի կայքեր, առցանց հանդիպումներ:

Թիրախներ/Արդյունքներ: ՏԿԵՆ-ի և ՀՎԷԷՀ-ի կայքերում տեղադրված և համայնքների միջև Էլեկտրոնային փոստով տարածված 4 Էլեկտրոնային ուղեցույց, համայնքային ՎԷԱ և ԷԱ նախագծերի համար 4 ձևանմուշ մոտավոր հաշվարկներով, 8 նոր սուբվենցիոն հայտ, 1,000 դիտում երկու կայքերով և սոցիալական էջերով:

Ժամանակացույց: Նախատեսվում է 2 ուղեցույցի և 2 ձևանմուշի մշակում 2023-2024թթ. ընթացքում (տարի 2), և ևս 2 ուղեցույցի և 2 ձևանմուշի մշակում 2025-2026թթ. ընթացքում (տարի 3) և դրանց տարածումը 2023-2027թթ. ընթացքում (տարիներ 2-5):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԶՆԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՂԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Խնդիր/Հիմնավորում: Համայնքներում իրականացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ կանոնավոր հանդիպումներն ու համաժողովները կարևոր նշանակություն ունեն համայնքների միջև համագործակցությունը հեշտացնելու և Էներգետիկ նախագծերի մշակման ու իրականացման վերաբերյալ փորձն ու գիտելիքները փոխանակելու համար: Հարցումների մասնակիցների մոտ 90%-ը համարում է, որ նման միջոցառումները՝ այլ համայնքների կողմից ՎԷԱ և ԷԱ ոլորտին վերաբերող գործողությունների կատարման մասին տեղեկանալու հիմնական եղանակն է:

Առաջարկվող գործողություններ: Համայնքների ներկայացուցիչների հետ տարեկան հանդիպումները կամ համաժողովները արժեքավոր հաղորդակցության միջոց են ՎԷԱ/ԷԱ տեխնոլոգիաները և լուծումները խթանելու համար, ինչպես երևում է համայնքներում իրականացված հարցումներից: Այս հանդիպումները կապահովեն կրթության հարթակ, համագործակցության, փորձի փոխանակման և հարաբերությունների կառուցման համար, որոնք բոլորն էլ կարևոր են համայնքում կայուն Էներգիայի կիրառումը խթանելու համար: Այս հանդիպումները նաև հնարավորություն կտան ՏԿԵՆ-ին համայնքներին տեղեկացնելու ազգային ռազմավարությունների, հնարավորությունների և ՎԷԱ և ԷԱ թիրախների մասին, ինչպես նաև փորձագետներին՝ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների, լուծումների վերաբերյալ իրենց գիտելիքներն ու փորձը կիսելու, առաջարկություններ ներկայացնելու, հարցերին պատասխանելու և տարբեր կարիքների համար օպտիմալ լուծումների ուղեցույց տրամադրելու նպատակով: Գործողություն 1-ի շրջանակներում մշակված ուսուցողական նյութերը նույնպես կներկայացվեն այս հանդիպումների ժամանակ:

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդության ներառականություն: Համայնքի ներկայացուցիչների հետ գործողություններ իրականացնելիս, կօգտագործվեն բոլոր հնարավորությունները կանանց մասնակցությունն այդ միջոցառումներին խրախուսելու, և, հիմնվելով տարեկան հանդիպումների միջոցով ստացված գիտելիքների վրա, իրենց ներդրումը հետագա գործողություններում ունենալու համար:

Նպատակ: Ոգեշնչել այլ համայնքներին օգտագործել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաները և միջոցներ խնայել այլ կարիքներին ուղղելու համար:

Հաղորդակցության ուղիներ: Առցանց և ուղիղ հաղորդակցություն, սոցիալական մեդիայի գրառումներ, նորություններ գործընկերների կայքերում և հեռուստատեսությամբ:

Գործիքներ: Հիբրիդային միջոցառումներ (առկա և/կամ առցանց)

Թիրախներ/արդյունքներ: 3 հիբրիդային հանդիպում և 1 առկա ձևաչափով համաժողով: Միջոցառումների 160 մասնակից և գումարային 1,000 առցանց շփում:

Ժամանակացույց: Նախատեսվում է ունենալ տարեկան հանդիպումներ «Էներգետիկ օրեր/շաբաթ» նախաձեռնության շրջանակներում՝ սկսած 2024թ.-ից (տարի 3), որը նախնական ծրագրվում է ՀՎԷԷՀ-ի և Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագրի կողմից: Համաժողովը նախատեսվում է կազմակերպել 2026 կամ 2027 թվականներին (տարիներ 4 կամ 5), որի ընթացքում Ծրագրի գործընկեր Գյումրի համայնքում իրականացվող պիլոտային ծրագրերի արդյունքները կներկայացվեն այլ համայնքներին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 3. ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՉԵԼԻՆՋ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԱՐՇԱԿ

Խնդիր/հիմնավորում: Ելակետային իրավիճակի գնահատման արդյունքներից պարզվել է, որ համայնքային կազմակերպությունների աշխատակիցների շուրջ 70%-ը վատ պատկերացում ունի ՎԷԱ տեխնոլոգիաների մասին, իսկ շուրջ 50%-ը՝ սահմանափակ պատկերացում ունի ԷԱ միջոցառումների մասին: Համայնքային շենքերի Էներգասպառման ինտենսիվության մասին տեղեկացված լինելը, այլ տվյալների հետ համեմատելու հնարավորություն ունենալը և տեսանելի պատկերացում ստանալը կարող են խթանել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ինտեգրումը շենքերի ղեկավարների կողմից, դրանով իսկ նպաստելով ավելի կայուն համայնքների ձևավորմանը, ինչը համահունչ է Շենքերի Էներգաարդյունավետության դիրեկտիվի դրույթներին:

Առաջարկվող գործողություններ: Գործողությունը հիմնված է և կրկնօրինակում է Եվրոպայում նախաձեռնված ցուցադրական արշավի վրա, որի նպատակն է ցուցադրել շենքերի արդյունավետությունը և ներգրավել քաղաքացիներին և հանրային շենքերի ղեկավարներին՝ այդ շենքերի Էներգասպառման մասին ավելի լավ պատկերացում ձևավորելու նպատակով: Այն կխրախուսի տեղական կառավարման մարմիններին/համայնքներին հրապարակայնորեն ցուցադրել հանրային շենքերի Էներգաարդյունավետությունը և բնապահպանական ցուցանիշները՝ կիրառելով Էներգետիկ պիտակավորման տրամաբանությունը, ինչը կիրառվում է սարքերի համար: Գործունեության շրջանակներում այս հայեցակարգը առաջին հերթին կիրականացվի Ծրագրի գործընկեր հանդիսացող Գյումրի համայնքում՝ հանրային շենքերի Էներգիայի, ջրի սպառման և ջերմոցային զազերի արտանետումների մակարդակները ցուցադրելու և ցուցադրվող պիտակների միջոցով արդյունքները բարելավելու համար փոփոխություններ խրախուսելու նպատակով: Այս տեղեկատվությունը կարող է քարտեզագրվել՝ շենքերի միջև եղած տարբերությունները տեսանելի դարձնելու համար: Բացի այդ, շենքերի ղեկավարների միջև առաջացած այս մրցակցությունը նրանց կխրախուսի գործել և իրենց շենքերում կիրառել կայուն Էներգիայի լուծումներ:

Հայեցակարգը և տեղեկատվական արշավն առաջինը կփորձարկվեն Գյումրիում, ցուցադրական ծրագիր ներդրման կամ գոյություն ունեցող ծրագրի գործարկման միջոցով: Այնուհետև Գյումրի համայնքի արդյունքները հայտնի դառնալուն պես կխրախուսվի կամավոր հիմունքներով համազգային տեղեկատվական արշավի ձևավորումը՝ նախաձեռնության մասշտաբն ընդլայնելու և այլ համայնքներ ներգրավելու հնարավորության ստեղծմամբ: Ամբողջ հանրապետությունում իրականացված մրցույթի արդյունքները կարող են ցուցադրվել «Էներգետիկ մրցանակներ» մրցանակաբաշխության շրջանակներում (Գործողություն 12):

Նպատակ: Բարելավել համայնքային շենքերի Էներգաարդյունավետությունը

Կանանց և երիտասարդության ներառականություն: Համայնքի երիտասարդները և կանայք, ազդեցիկ անձինք և ակտիվիստները կիրավորվեն մասնակցելու Գործողություն 3-ի շրջանակներում կազմակերպված հանդիպումներին և միջոցառումներին՝ իրենց ձայնը լսելի դարձնելու համար:

Առաջնահերթություն: Ցածր

Հաղորդակցության ուղիներ: Առցանց և ուղիղ հաղորդակցություն, մրցույթ

Գործիքներ: Առցանց հայտեր, մրցույթ, դեմ-առ-դեմ միջոցառումներ

Թիրախներ/արդյունքներ: Ցուցադրական ծրագրեր երկու արշավների համար՝ մեկը տեղական մասշտաբով (Գյումրի), մյուսը երկրի մասշտաբով: Մասնակցությունը՝ 30 շենք և 100 հայտ:

Ժամանակացույց: Գյումրիում՝ 2024-2025թթ. (տարի 3), ամբողջ հանրապետությունում՝ 2026-2027թթ. (տարիներ 4-5)

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 4: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՆՏԵՐՈՒԲԱԸ ՀԵՌՈՒՄՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՒՄ

Խնդիր/Հիմնավորում: Հեռուստահաղորդումները լայն տարածում ունեն և հասանելիություն են ապահովում տարբեր տարիքի, մասնագիտությունների և կրթական մակարդակի հեռուստադիտողների: Հաղորդումների սյուժեյում անդրադառնալով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներին՝ արտադրողները կարող են օգտվել հարթակի հնարավորություններից և առաջ քաշել մաքուր Էներգիայի և կայուն զարգացման գաղափարը: ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներկայացումը հեռուստատեսային եթերում կարող է շատ արդյունավետ հաղորդակցության միջոց հանդիսանալ, ինչը թույլ կտա կրթել հեռուստադիտողին և նրա ուշադրությունը բևեռել մաքուր Էներգիայի և ԷԱ տեխնոլոգիաների առավելությունների ու դրանց կարևորության վրա: Ճշգրիտ և ազդեցիկ սցենարի ու երկխոսության միջոցով հեռուստահաղորդումները կարող են արդյունավետորեն խթանել մաքուր Էներգիայի օգտագործումը և, հետևաբար, նպաստել ավելի կայուն ապագայի:

Առաջարկվող գործողություններ: Հաղորդման ժամանակ խոսելով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների մասին կարելի է ցուցադրել/ներկայացնել արևային մարտկոցների կամ այլ կայուն Էներգիայի աղբյուրների օգտագործումը կենցաղային կամ առևտրային/կոմերցիոն Էներգասպառման նպատակով: Սա կարող է ոգեշնչել հեռուստադիտողներին կիրառել նմանատիպ լուծումներ սեփական Էներգասպառման համար: Հաղորդման սցենարը և զրույցները, որոնք ճշգրիտ կերպով կներկայացնեն այդ տեխնոլոգիաները և դրանց առավելությունները, կարող են բարձրացնել հանրության իրազեկվածությունն ու ըմբռնումը: Սցենարը կարող է ներառել տեսական բացատրություններ և իրական կյանքից օրինակներ այն մասին, թե ինչպես են աշխատում ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի և էլեկտրաէներգիայի վճարների դիմաց: Այս գործողությունը նախատեսվում է իրականացնել ՎԷԱ և ԷԱ մատակարարների, ՉԼՄ-ների և այլ գործընկերների հետ համագործակցությամբ և ներկայացնել այդ կազմակերպությունների համար նախատեսված հանդիպումների ժամանակ:

Նպատակ: Տարածել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների մասին տեղեկատվությունը հասարակության լայն շրջանակներում՝ հասնելով միաժամանակ բազմաթիվ քաղաքացիների

Կանանց և երիտասարդության ներառականություն: Զանի որ հեռուստահաղորդումների լսարանը խիստ մասնատված է, կանանց դերը հաշվի կառնվի հեռուստադիտողների համար ուղերձներ մշակելիս:

Առաջնահերթություն: Ցածր

Հաղորդակցության ուղիներ: Ավանդական լրատվամիջոցներ, սոցիալական կայքեր

Գործիքներ: Հեռուստատեսություն, YouTube ալիքներ

Թիրախներ/Արդյունքներ: Ընտրված հեռուստահաղորդումների առնվազն 5 սերիա, որոնք կցուցադրվեն նաև YouTube-ում, 5,000 շփում թիրախային լսարանի հետ (դիտումներ, արձագանքներ):

Ժամանակացույց: 2025-2027թթ. (տարիներ 3-5):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 5: ՎԷԱ ԵՎ ԷԱ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆՈՐԴ ՈՂԱԿՆԵՐՈՎ

Խնդիր/Հիմնավորում: Համայնքներում իրականացված հարցման արդյունքում պարզվել է, որ բնակիչներին հասնելու ամենարդյունավետ միջոցները համայնքների պաշտոնական կայքերն են և սոցիալական ցանցերը: Սակայն, հարցումը ընդգծել է նաև այն մտահոգիչ փաստը, որ համայնքների կեսից ավելին չեն օգտագործում այս հարթակների միջոցով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների և դրանց կիրառման առավելությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումը բնակչության շրջանում: Անարդյունավետ հաղորդակցության կամ հաղորդակցության համար անհրաժեշտ կարողությունների անբավարար լինելու խնդիրը նույնպես նշվել է ՎԷԱ և ԷԱ մատակարարների կողմից:

Առաջարկվող գործողություններ: Նախատեսվում է մշակել արդյունավետ հաղորդակցության վերաբերյալ նյութեր և համայնքների համապատասխան աշխատակիցներին առցանց ներկայացնել դրանք հնարավորության դեպքում ՎԷԱ և ԷԱ մատակարարների ու այլ գործընկերների հաղորդակցության մասնագետների ներգրավմամբ, ինչպես, ինչու և որ Էներգետիկ նախագծերի իրականացման ժամանակ պաշտոնական կայքերը, սոցիալական կամ ավանդական լրատվամիջոցներն ինչպես օգտագործել: Օրակարգը կներառի Էներգետիկ անվտանգության և ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ու դրանց առավելությունների վերաբերյալ նորությունների արդյունավետ հաղորդումը՝ օգտագործելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են վիզուալիզացիան՝ ինֆոգրաֆիկան, համեմատական գրաֆիկները, լուսանկարները և տեսանյութերը: Մասնակիցները կիրավիրվեն դիմելու «Էներգետիկ մրցանակներ» մրցույթին՝ իրենց հաղորդակցության արշավների արդյունքները, նյութերը և հոդվածները ցուցադրելու միջոցով (Գործողություն 12):

Նպատակ: Տարածել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների մասին տեղեկատվությունը լայն շրջանակներում՝ հասնելով միաժամանակ բազմաթիվ քաղաքացիների:

Կանանց և երիտասարդության ներառականություն: Կանանց և երիտասարդների ընդգրկման անհրաժեշտությունը ՎԷԱ և ԷԱ իրականացման հետ կապված

գործողություններում կներկայացվի համայնքներին, մատակարարներին և այլ համապատասխան կողմերի ներկայացուցիչներին աշխատանքային հանդիպումների ժամանակ, և կտրվեն մանրամասն օրինակներ՝ խթանելու այդ հարցի ըմբռնումը և հետագա կիրառումը իրենց հաղորդակցության մեջ:

Առաջնահերթություն: Բարձր

Հաղորդակցության ուղիներ: Առցանց հաղորդակցություն

Գործիքներ: Առցանց հանդիպումներ, ուսուցողական նյութեր, մրցույթ (Էներգետիկ մրցանակներ)

Թիրախներ/Արդյունքներ: Որոշել հաղորդակցության առաջնահերթ գործողությունները և ներկայացնել դրանք գործընկեր հաստատությունների շուրջ 50 հաղորդակցության մասնագետների/պատասխանատուների: Համայնքների կողմից արտադրված կոնտենտը համայնքների տեղեկատվական ալիքներով տարածել 10,000 քաղաքացիների շրջանում:

Ժամանակացույց: 2024թ. (տարիներ 2-3):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 6: ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆԱԽԱԳԾԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Խնդիր/Հիմնավորում: Համաձայն ելակետային իրավիճակի գնահատման, որը ներառում էր հարցումներ և հարցազրույցներ, դպրոցների և դպրոցականների ներգրավումը հաղորդակցության արշավում կարևորագույն նշանակություն ունի, քանի որ այն արդյունավետ միջոց է հանդիսանում նաև դպրոցի անձնակազմին, ուսուցիչներին, ծնողներին և համայնքի այլ անդամներին հասնելու համար: 2023թ.-ից նախագծային ուսուցումն աշակերտների (7-9-րդ դասարաններ) համար պարտադիր կլինի հանրապետությունում, և յուրաքանչյուր դպրոցական պետք է մասնակցի ծրագրի իրականացմանը: Հետևաբար, այս համատեքստում առաջարկվում է խթանել Էներգետիկայի հետ կապված փոքր ծրագրերի իրականացումը:

Առաջարկվող գործողություններ: Այս գործողությունը ներառում է դպրոցներում Էներգետիկայի միջոցառումների մասին երեխաների իրազեկում և իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ համագործակցելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի հետ: Գործողության շրջանակներում առաջին հերթին նախատեսվում է կազմակերպել դասընթացներ մենթորների համար և ներկայացնել հնարավոր փոքրածավալ Էներգետիկ նախագծերի իրականացման շրջանակը՝ համապատասխան ուղեցույցներով: Մենթորները դասընթացներ և/կամ աշխատաժողովներ կանցկացնեն ուսուցիչների հետ, որոնք կառաջնորդեն դպրոցականների խմբերը դպրոցում Էներգետիկ նախագծեր իրականացնելու գործընթացում: Նախապես ընտրված նախագծերը կմասնակցեն Երևանում կամ այլ քաղաքում նախագծերի մրցույթի, որտեղ կընտրվի հաղթող նախագիծը: Իսկ հաղթող նախագիծը ներկայացրած թիմը հնարավորություն կստանա իր առաջարկած նախագիծն իրականացնել համապատասխան դպրոցում: Այս նախաձեռնությունն առաջինը կփորձարկվի մեկ համայնքում կամ մարզում, այնուհետև կտարածվի ամբողջ հանրապետությունում, անհրաժեշտության դեպքում վերամշակված հայեցակարգով: Այս գործունեությունը կնպաստի ԷԿԷԱԾ/ԷԿԱՊ-ում սահմանված թիրախների կատարմանը:

Նպատակ: Ոգեշնչել երիտասարդությանը ՎԷԱ և ԷԱ գաղափարներով, խրախուսել ՎԷԱ և ԷԱ միջոցառումների իրականացումը դպրոցներում, ներգրավել ավելի լայն լսարաններ, ինչպիսիք են ծնողներ, կանայք:

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդության ներառականություն: Այս գործողությունը բացառապես սվիրված է երիտասարդության ու կանանց ընդգրկմանը, քանի որ նախագծերը դպրոցներում կիրականացվեն աշակերտների, ուսուցիչների, դպրոցների վարչական անձնակազմի ներգրավմամբ: Դպրոցի անձնակազմը սովորաբար բաղկացած է կանանցից, և ծնողները ակտիվ մասնակցություն են ունենում դպրոցական նախաձեռնություններում:

Հաղորդակցության ուղիներ: Առցանց և ուղիղ հաղորդակցություն, դպրոցական սոցիալական մեդիա հարթակներ, առցանց նորություններ, հեռուստատեսություն:

Գործիքներ: Ուսուցողական նյութեր, տեղեկատվական պաստառներ, դպրոցներում Էներգետիկ բնույթի նախագծերի իրականացման ուղեցույցներ, մրցույթներ, հանրային միջոցառումներ, փոքրածավալ պիլոտային նախագծեր:

Թիրախներ/Արդյունքներ: Դպրոցներում պոտենցիալ փոքրածավալ Էներգետիկ նախագծերի շրջանակ՝ համապատասխան ուղեցույցներով, մենթորների վերապատրաստում և դպրոցական թիմերի միջև մրցույթ՝ 1 տեղական մակարդակով (Շիրակի մարզ) և 1 ազգային մակարդակով, թիրախային լսարանի հետ 500 շփման դեպք, 20 փոքրածավալ Էներգետիկ նախագծերի առաջարկ:

Ժամանակացույց: Փորձարկում 2024թ. (տարի 3) և ընդլայնված կիրառում 2026թ. (տարի 4):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 7: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԽԹԱՆՈՂ ԽՈՐՀՈՒՐՆԵՐ

Խնդիր/Հիմնավորում: Բացակայում են գործնական խորհուրդների և ուղեցույցների ձևաչափով ներկայացված, արդյունավետորեն ազդող, հայալեզու և հասանելի տեղեկություններ, թե ինչպես ընտրել/ներդրումներ կատարել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներում, ինչպես ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների իրականացման միջոցով հասնել նպատակներին և նպաստել կայուն ապրելակերպին:

Առաջարկվող գործողություններ: ՎԷԱ և ԷԱ-ի վերաբերյալ զանգվածային իրազեկման բարձրացման և խթանման նպատակով քաղաքային և գյուղական վայրերում բնակվող բնակիչներին հասցեագրված խորհուրդները կարող են արդյունավետ հաղորդակցության միջոց հանդիսանալ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաները խթանելու համար: ԷԱ վերաբերյալ խորհուրդները, որոնք կադապտացվեն կախված լսարանից, կարող են օգնել բնակիչներին հասկանալ, թե ինչպես սվազեցնել Էներգիայի սպառումը և որդեգրել Էներգիանայողության միջոցառումներ կիրառելու պրակտիկան, որն առավել հարմարեցված է հաշվի առնելով իրենց կոնկրետ կենսապայմանները: Բնակիչներին տրամադրելով հեշտ իրականացվող և գործնական խորհուրդներ՝ հաղորդակցության այս միջոցը կարող է նրանց ոգեշնչել գործել: Թիրախավորելով ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերում բնակվող բնակիչներին՝ հաղորդակցության այս միջոցը կարող է նաև ապահովել կայուն Էներգիայի կիրառման փորձի հասանելիություն բոլորին՝ անկախ կենսապայմաններից: Սա կարող է նպաստել մաքուր Էներգիայի գաղափարի որդեգրման հարցում արդարության և սոցիալական լայն շերտերի ընդգրկման ավելի մեծ

արդարության և ներառման խթանմանը: Բացի առաջարկվող խորհուրդներից, կցուցադրվեն իրական հաջողության պատմություններ: Մշակված խորհուրդներն ու հաջողության պատմությունները կարելի է վիզուալիզացնել՝ օգտագործելով կարճ, անխմացիոն բացադրիչներ և ինֆոգրաֆիկա: Խորհուրդները կձևակերպվեն ՎԷԱ և ԷԱ մատակարարների, ՀՎԷԷՀ-ի և այլ գործընկերների հետ սերտ համագործակցության միջոցով: Մշակված ՎԷԱ և ԷԱ խորհուրդները կտարածվեն նաև «ՎԷԱ և ԷԱ հաղորդակցություն միջանկյալ ուղիներով» (Գործողություն 5) մասնակիցների ցանցի միջոցով:

Նպատակ: ՎԷԱ և ԷԱ խորհուրդները և հաջողության պատմությունները հասանելի դարձնել բնակչությանը, ներկայացնել հեշտ ընկալվող ձևաչափով՝ թվայնացված լրատվամիջոցներով

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդության ներառականություն: Խորհուրդներ և առաջարկներ կազմելիս, բովանդակության մեջ հաշվի է առնվելու ոչ միայն կանանց և երիտասարդների ներգրավելու գործոնը, այլև օգտագործվելու են գենդերային առումով զգայուն ձևակերպումներ:

Հաղորդակցության ուղիներ: Գործընկերների, համայնքների կայքեր/սոցիալական էջեր, կայքեր, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Գործիքներ: Ուսուցողական կյուբեր, համայնքների, ՀՎԷԷՀ/գործընկեր կազմակերպությունների կայքեր և սոցիալական հարթակներ:

Թիրախներ/Արդյունքներ: ԷԱ կիրառման խորհուրդներ ձմեռային և ամառային սեզոնների համար, ՎԷԱ Էներգիայի խմբային և զուտ հաշվառման վերաբերյալ խորհուրդներ, 2-3 կարճ, անխմացիոն բացատրականներ, 500 թվային շփում թիրախային լսարանի հետ (դիտումներ, արձագանքներ):

Ժամանակացույց: 2023-2027 թվականներ (Տարիներ 2-5)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 8: ԷԶՄՈՒ ԵՎ ՄԵԴԻԱ ՇՐՋԱՅՑ ՊԻՆՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

Խնդիր/Հիմնավորում: Հարցումները ցույց են տվել, որ հանրային միջոցառումները և անձնական շփումները տեղեկատվության տարածման ամենաարդյունավետ ուղիներից են: Այդ նպատակով Էքսպո-միջոցառումների կազմակերպումը Երևանից դուրս, որտեղ նման միջոցառումներ պարբերաբար չեն անցկացվում, կարող է բարձր արդյունավետությամբ գրավել տեղական համայնքների ուշադրությունը և հետաքրքրությունն առաջացնել: Ելակետային իրավիճակի գնահատման ժամանակ գործընկեր կազմակերպությունները լրատվամիջոցների/մամուլի շրջայցերի փորձը համարել են տեղեկատվության տարածման հարցում արդյունավետ գործիք: Այսպիսով, մեդիա շրջայցի և ցուցահանդեսների միջոցով փորձագետներն ու կազմակերպությունները կարող են ցուցադրել կայուն Էներգիայի վերջին տեխնոլոգիաները և նախաձեռնությունները՝ միաժամանակ ներգրավելով հանրությանը և անդրադառնալով ցանկացած հարցի կամ մտահոգիչ երևույթի: Դեմ առ դեմ շփումների ժամանակ մասնակիցները կարող են էլ ավելի արդյունավետորեն տեղեկանալ ՎԷԱ և ԷԱ առավելությունների մասին:

Առաջարկվող գործողություններ: Այս գործողության շրջանակներում Գյումրիում կկազմակերպվի «Էներգետիկ էքսպո» միջոցառումը, որը կներառի ցուցահանդեսներ, ինտերակտիվ քննարկումներ և ցուցադրություններ՝ այցելուներին ներգրավելու և կայուն էներգիայի կիրառման պրակտիկան խթանելու համար, գվարճալի և մոտիվացնող միջոցառումներ, ինչպիսիք են վիճակախաղի տոմսերը և երիտասարդների մասնակցությամբ նկարչական մրցույթը, մրցանակները, օրինակ՝ ջրի շէր, արևային էներգիայի մարտկոցներ, գավաթներ, գլխարկներ և շապիկներ համապատասխան գրություններով (ներառյալ հեշթեգերը#): Գործողությունը ներառում է նաև մեդիա շրջայցի կազմակերպում, որի շրջանակներում լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն կունենան այցելել Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագրի կողմից Գյումրիում պիլոտային ծրագրի իրականացման վայրերը, ծանոթանալու իրականացված լուծումներին և համայնքի վրա դրանց ազդեցությանը, հարցազրույցներ ունենալ փորձագետների և համայնքի անդամների հետ: Գործողությունը նախատեսվում է կազմակերպել համայնքների հետ հանդիպումներին զուգահեռ (Գործողություն 2):

Նպատակ: Բարձրացնել կայուն էներգիայի կիրառման փորձի մասին իրազեկվածությունը Հայաստանի մարզերում, կապել մասնակիցներին ոլորտի փորձագետների հետ, ապահովել փորձի փոխանակման և համագործակցության հնարավորություններ, ցուցադրել կայուն էներգիայի նորարարական լուծումներ և տեխնոլոգիաներ, խթանել նոր մոտեցումները, ներգրավել կանանց ու երիտասարդներին:

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդության ներառականություն: Երիտասարդներին և նրանց ծնողներին ուղղված եզակի միջոցառումների և հաղորդակցության արշավի արդյունքում պիլոտային համայնքում կազմակերպված ցուցահանդեսն այս խմբերին կներգրավի այնպես, որ ազդի նրանց միջնաժամկետ և երկարաժամկետ որոշումների վրա, և հնարավորություն տա տարածել ցուցահանդեսի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը: Համայնքի ձեռքբերումների ցուցադրման ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի ներդրման կոնտեքստում կանանց շոշափելուն, որպեսզի հետագա լուսաբանումների ժամանակ ներկայացվեն համայնքի կին ներկայացուցիչների տեսանկյունից:

Հաղորդակցության ուղիներ: Ուղիղ հաղորդակցություն, հանրային միջոցառում, հեռուստատեսություն, սոցիալական կայքեր:

Գործիքներ: Ցուցահանդես, մեդիա շրջայց:

Թիրախներ/Արդյունքներ: Ցուցահանդեսին մասնակցող 20 ՎԷԱ և ԷԱ վաճառող/մատակարար ընկերություններ, մեդիա շրջայցին մասնակցող լրատվամիջոցների 10 ներկայացուցիչ; 10 նոր նախագիծ, որոնք նախագծվել կամ տեղադրվել են հաղորդակցության արշավի շնորհիվ, 2,500 փոխազդեցություն թիրախային լսարանի հետ և 25,000 արձագանք ցուցահանդեսի և շրջայցի հետ կապված թվային լրատվամիջոցների պատրաստած բովանդակության շուրջ:

Ժամանակացույց: 1 հանրային միջոցառում 2025-2026թթ. (տարի 4):

ԲԻՉԼԵՍՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 9: ՎԷԱ ԵՎ ԷԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՏԱԼՈՂՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Խնդիր/Հիմնավորում: ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կատալոգները կարող են արժեքավոր ռեսուրս ծառայել կապալառուների, ճարտարապետների և ինժեներների համար, որոնք մասնակցում են շենքերի և ենթակառուցվածքների նախագծմանը և կառուցմանը: Նրանք կարող են օգտագործել կատալոգները՝ իրենց նախագծերի համար առավել համապատասխան ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներն ընտրելու համար, ինչը կհանգեցնի շինարարության ոլորտում մաքուր էներգիայի ավելի հաճախ կիրառման: Այս գործողությունն իրականացնելիս հաշվի կառնվի EnergyStar-ի փորձը: Բացի այդ, Հաճախ տրվող հարցեր (FAQ) և Հարցուպատասխան մոտեցումների կիրառման շնորհիվ ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների առավելությունները փոխանցելու արդյունավետ տարբերակ են, քանի որ դրանք ապահովում են բազմազան թիրախային լսարանների համար տեղեկատվության հասանելիությունը:

Առաջարկվող գործողություններ: Այս գործողությունը ներառում է ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կատալոգների մշակում, որտեղ ներկայացվելու է այդ տեխնոլոգիաների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ Հայաստանի պայմաններում նախատեսված նախագծերի առանձնահատկություններին համապատասխան (հետազոտությունների հիման վրա): Կատալոգները կներառեն նկարներ, օգտակար տեղեկություններ, խորհուրդներ և հասանելի կլինեն առցանց:

Հաղորդակցության արդյունավետությունը բարձրացնելու համար յուրաքանչյուր տեխնոլոգիայի վերաբերյալ կներկայացվի Հաճախ տրվող հարցեր կամ Հարցուպատասխան բաղադրիչը՝ բիզնեսի ներկայացուցիչների համար իրական նախադեպերի ներկայացմամբ: ԷԱ միջոցառումների համար կարելի է գեներացնել առաջարկներ, օրինակ՝ շիկացման լամպերի փոխարինում յուլմինեսցենտային կամ լուսադիոդային լամպերով, ծրագրավորման շնորհիվ որոշակի սարքերի աշխատանքային ժամերի փոփոխություն, օրինակ՝ լվացքի մեքենայի կամ արդուկի ցերեկային ժամերից գիշերային ժամերի:

Նպատակ: Խթանել ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների կիրառումը տեխնոլոգիական կատալոգների պատրաստման, տեխնոլոգիաների շահագործման իրավիճակների մասին հարցուպատասխանի միջոցով:

Կանանց և երիտասարդների ներառականություն: ԷԱ տեխնոլոգիաների մասին տեղեկատվություն ներկայացնելիս կարող են դիտարկվել օգտագործման որոշ դեպքեր, ասպեկտներ, որոնք օգտակար կլինեն հատկապես կին շահագործողների համար:

Առաջնահերթություն: Ցածր

Հաղորդակցության ուղիներ: Համացանց

Գործիքներ: ՏԿԵՆ-ի և/կամ ՀՎԷԷՀ-ի կայքեր

Թիրախներ/Արդյունքներ: ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների 2 կատալոգ, հաճախ տրվող հարցեր կամ հարցուպատասխան և առաջարկություններ յուրաքանչյուր տեխնոլոգիայի վերաբերյալ, հաղորդակցության արշավի շնորհիվ մշակված կամ իրականացված 5 նոր

նախագիծ, 1,000 ինտերակտիվ շփում թիրախային լսարանի հետ (դիտումներ, ներբեռնում):

Ժամանակացույց: ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների համար 2 կատալոգի պատրաստում 2024-2025 թվականների ընթացքում (տարի 3):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 10: ՀԱՄԱԺՈՂՈՎ ԲԻՉՆԵՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խնդիր/Հիմնավորում: Բիզնեսի ներկայացուցիչների համար «Energy Aware (Էներգիտակից/Էներգազեկ)» համաժողովը կարող է արդյունավետ միջոց լինել մաքուր Էներգիայի կիրառման առավելությունները բիզնես համայնքին ներկայացնելու, մաքուր Էներգիայի ոլորտում վերջին զարգացումներին և լավագույն փորձին ծանոթացնելու հարթակ հանդիսանալ, ինչպես նաև այլ համախոհ կազմակերպությունների և գործընկերների հետ կապեր և հարաբերություններ հաստատելու համար: Համաժողովի ընթացքում ներկայացնելով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների ներդրման միջոցով փոքր և միջին բիզնեսների հաջողության պատմությունները հնարավոր կլինի ոգեշնչել մյուս գործարարներին հետևել այդ հաջող օրինակներին և անցնել մաքուր Էներգիայի կիրառմանը:

Առաջարկվող գործողություններ: Հայաստանի Էներգետիկ անվտանգության ծրագիրը համագործակցելու է ֆինանսական հաստատությունների և ՎԷԱ և ԷԱ մատակարար/վաճառողների հետ իրենց հաճախորդների լավագույն փորձի մասին պատկերացում կազմելու համար, որոնք հաջողությամբ ՎԷԱ և ԷԱ նախագծեր են իրականացրել՝ իրենց բյուջեն օպտիմալացնելու, իրենց մրցունակությունը շուկայում ամրապնդելու և շրջակա միջավայրի վրա դրական ազդեցություն գործելու նպատակով: Տեղի կունենան քննարկումներ՝ բիզնեսի ոլորտում մաքուր Էներգիայի կիրառման արգելքները/խոչընդոտները բացահայտելու և պետական քաղաքականության ու կարգավորման միջոցով մաքուր Էներգիային անցումը խրախուսելու լուծումների մասով:

Նպատակ: Կայուն Էներգիայի լուծումների առավելությունները ներկայացնել բիզնես համայնքին և ոգեշնչել այլ գործարարներին որդեգրել մաքուր Էներգիայի օգտագործման մոտեցումները:

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդների ներառականություն: Գործողությունը նպատակ ունի ընդգրկել կանանց՝ որպես խոսնակներ և պանելային քննարկման մասնակիցներ:

Հաղորդակցության ուղիներ: Ուղիղ և առցանց հաղորդակցություն, սոցիալական ցանցեր, համացանց: **Գործիքներ:** ՏԿԵՆ և/կամ ՀՎԷԷՀ կայքեր

Գործիքներ: Հիբրիդային համաժողով

Թիրախներ/Արդյունքներ: «Էներգետիկ իրազեկում» համաժողով բիզնես համայնքի համար, հաղորդակցության արշավի շնորհիվ մշակված կամ իրականացված 5 նոր նախագիծ; միջոցառումներին ներկա 40 մասնակից; թիրախային լսարանի հետ ինտերակտիվ շփման 40 դեպք:

Ժամանակացույց: 1 միջոցառում 2025-2026թթ. (տարի 4) ֆինանսական հաստատությունների և ՎԷԱ և ԷԱ մատակարարների մասնակցությամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 11: ՎԷԱ ԵՎ ԷԱ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՅՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Խնդիր/Յիմնավորում: Ընկերություններն ձգտում են նվազեցնել էներգիայի ծախսերը և բարելավել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ ներդրումներ կատարելով ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաներում: Այնուամենայնիվ, չնայած ՎԷԱ և ԷԱ ներդրումների ապացուցված օգուտներին՝ շատ ընկերություններ դեռ երկմտում են ու չեն գործում՝ առկա տարբերակների, օգուտների և ներդրումների ետզնման մասին իրազեկվածության ու ընկալման բացակայության պատճառով: Այս խնդրին լուծում տալու համար ազատականացված շուկայի մասնակիցների, գործընկերների ու հաջողված ՎԷԱ և ԷԱ ներդրումներ իրականացրած ընկերությունների մասին պատմող հարցազրույցներ ու վերլուծական հոդվածներ կներկայացվեն բիզնես համայնքին տարբեր առցանց լրատվական հարթակներով: Այս հոդվածները նաև լույս կսփռեն օրենսդրական բարեփոխումների ու շուկայի զարգացումների վրա՝ բիզնես համայնքին առավել հաջողված ներդրումների մասին իրազեկելու նպատակով: Գործարարների կողմից իրական փորձի փոխանակումը կապված ՎԷԱ և ԷԱ ներդրումներից ստացած օգուտների հետ նույնպես կնպաստի այս տեխնոլոգիաների առավելությունների մասին իրազեկման բարձրացման և ըմբռնմանը, և կոգեշնչի մյուսներին ձեռնարկել նմանատիպ գործողություններ, ինչն ի վերջո կհանգեցնի էներգախնայողության ավելացմանը:

Առաջարկվող գործողություններ: Այս գործողությունը կներառի համապատասխան հարցազրույցներ ազատականացված էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների և այլ գործընկերների հետ՝ ցուցադրելու հաջողված ՎԷԱ և ԷԱ լուծումները, իրական օրինակները, թե ինչ օգուտներ են շահել բիզնեսները ազատականացված շուկայից: Մամուլում վերլուծական հոդվածներ կիրապարակվեն օրենսդրական փոփոխությունների, շուկայի զարգացումների և ՎԷԱ և ԷԱ ներդրումների օգուտների մասին և տարբեր լրատվական հարթակների միջոցով բիզնես համայնքին կներկայացվեն վերհանված իրական օրինակները: Հայաստանի էներգետիկ անվտանգության ծրագիրը նախատեսում է համագործակցել ֆինանսական հաստատությունների և ՎԷԱ և ԷԱ մատակարարների հետ՝ նման դեպքերի/ընկերությունների մասին տեղեկատվության հղումներ տրամադրելու համար, և ՀԾԿՀ-ից ստանալ մեկնաբանություններ կամ վերլուծական տվյալներ՝ հոդվածներում օգտագործելու և հոդվածներն ավելի հետաքրքիր դարձնելու համար: Ծրագիրը հետաքրքրություն կառաջացնի նաև առցանց լրատվամիջոցների միջոցով և հրավիրելով բիզնես համայնքին մասնակցելու Շուկայի կառավարման ծրագրի դեմո-դիտմանը նվիրված առցանց հանդիպմանը և բոլոր լսարանների համար հղումով ակտիվացվող հարցուկատասխանի նիստին:

Նպատակ: Ազատականացված շուկայի առաջընթացի մասին իրազեկում և ՎԷԱ և ԷԱ կիրառման հաջողության պատմությունների ներկայացում:

Առաջնահերթություն: Բարձր

Կանաչ և երիտասարդների ներառականություն: Հարցազրույցներում և հոդվածներում կանայք կարտահայտեն իրենց կարծիքները:

Հաղորդակցության ուղիներ: Կայքեր (օրինակ՝ Banks.am) և սոցիալական ցանցեր

Գործիքներ: Հարցազրույցներ և հոդվածներ

Թիրախներ/Արդյունքներ: 9 լուսաբանում, ներառյալ ձեռքբերումների մասին հարցազրույցները, ՎԷԱ և ԷԱ հաջողության պատմությունները, առցանց ցուցադրությունները, 5 նոր նախագիծ, որոնք մշակվել կամ իրականացվել են

հաղորդակցության արշավի շնորհիվ և 3,000 ինտերակտիվ շփում թիրախային լսարանների հետ:

Ժամանակացույց: 2023-2027թթ. (տարիներ 2-5)

ՓՈՒՆԼՐԱՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 12. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Խնդիր/Հիմնավորում: Էներգետիկայի բնագավառի մրցանակաբաշխության արարողությունը կհամախմբի շահագրգիռ կողմերին, որոնք ներգրավված են ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների խթանման և/կամ կիրառման մեջ: Մրցանակները կարժևորեն տարբեր անվանակարգերում ներկայացված շահագրգիռ կողմերի, այդ թվում համայնքների, շենքերի մենեջերների, լրատվամիջոցների, բնակիչների, փորձագետների, երիտասարդության և բիզնեսի ներկայացուցիչների գործադրած ջանքերը: Արարողությանը կմասնակցեն նաև ՎԷԱ և ԷԱ մատակարար ընկերություններն ու ֆինանսական հաստատությունները՝ մրցելով լավագույն հաղորդակցության արշավի մրցանակի համար: Մրցանակաբաշխության հայեցակարգը պատրաստ լինելուն պես դրա մասին տեղեկատվությունը կտարածվի հնարավոր մասնակիցների շրջանում: Դրան զուգահեռ տեղի կունենան դասընթացներ կամ միջոցառումներ՝ մրցանակաբաշխությունից առաջ որոշակի գործողություններ խրախուսելու նպատակով: Մրցանակաբաշխության նախնական անվանակարգերը ներառում են «Լավագույն կանաչ համայնք», «Հաղորդակցության լավագույն արշավ», «Լավագույն ԷԱ նախաձեռնություն», «Լավագույն ՎԷԱ նախաձեռնություն», «ՎԷԱ և ԷԱ/շուկայի ազատականացման վերաբերյալ լավագույն հոդված» և այլն:

Առաջարկվող գործողություններ: Առաջինը կմշակվի Էներգետիկայի բնագավառի մրցանակաբաշխության հայեցակարգը, ներառյալ անվանակարգերը, մասնակցության չափանիշները և գնահատման ընթացակարգը: Մրցանակաբաշխության մասին տեղեկատվությունը թվային, անիմացիոն բացատրականների միջոցով կհաղորդվի պոտենցիալ մասնակիցներին: Այնուհետև շահագրգիռ անձինք կիրավիրվեն իրենց հայտերը մրցանակաբաշխության անվանակարգերում ներկայացնելու համար: Դիմումները պետք է ներառեն համապատասխան տեղեկատվություն ծրագրի կամ նախաձեռնության մասին, ինչպիսիք են նպատակները, ձեռքբերումները և ազդեցությունները: Հայտերի գնահատումը հիմնված է լինելու մրցանակաբաշխության չափորոշիչների վրա: Հաղթողները կընտրվեն և կհայտարարվեն մրցանակաբաշխության արարողության ժամանակ, ինչին կհաջորդեն հարցազրույցները հաղթողների հետ: Էներգետիկայի բնագավառի մրցանակաբաշխությունը կարող է դառնալ ՏԿԵՆ-ի հովանու ներքո երկու տարին մեկ կազմակերպվող միջոցառում:

Նպատակ: Ճանաչել և աջակցել շահագրգիռ անձանց, որոնք ներգրավված են ՎԷԱ և ԷԱ տեխնոլոգիաների զարգացման և (կամ) կիրառման մեջ, ինչպես նաև խթանել տեխնոլոգիաների նշանակության մասին հանրային իրազեկումը:

Առաջնահերթություն: Բարձր

Կանանց և երիտասարդների ներառականություն: Մրցանակաբաշխությանը նախատեսված է հրավիրել կանանց և երիտասարդներին և, հնարավոր է, առանձին անվանակարգում:

Հաղորդակցության ուղիներ: Ուղիղ և առցանց հաղորդակցություն, առկա ձևաչափով միջոցառումներ, սոցիալական ցանցեր, հեռուստատեսություն, առցանց լրատվական հարթակներ:

Գործիքներ: Հիբրիդային արարողություն, կենդանի շփում, մամուլի հաղորդագրության էլեկտրոնային տարածում, հաղթող նախագծերի մասին հատուկ թողարկումներ առցանց հարթակներում և հեռուստատեսային հարցազրույցներ:

Թիրախներ/Արդյունքներ: 5 հաղթող, 5 հարցազրույց, մրցանակաբաշխությանը և ցուցադրություններին մասնակցած 120 մարդ և 3,000 ինտերակտիվ շփում թիրախային լսարանների հետ:

Ժամանակացույց: Մրցանակաբաշխության արարողություն՝ Տարի 3 և Տարի 5:

ԲՐԵՆՂԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՄԱԿՆՇՈՒՄ

Ինչ վերաբերում է այն գործողություններին, որոնք կիրականացվեն դոնոր կազմակերպությունների կողմից կամ աջակցությամբ, կազմակերպության ինքնությունը կցուցադրվի համապատասխան տպագիր, աուդիո, վիդեո և էլեկտրոնային նյութերում, ապրանքների և սարքավորումների վրա, կայքերում, գովազդային և տեղեկատվական ապրանքների միջոցով և հանրային միջոցառումների ժամանակ:

Երբ գործողություններն իրականացվեն մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կամ այլ գործընկերների հետ համատեղ, այդ կազմակերպությունների ներդրումը ճանաչվում է համատեղ բրենդավորմամբ: Նման դեպքերում տեղական գործընկերոջ լոգոն կարող է օգտագործվել պատրաստված նյութերի վրա:

Բոլոր կիրառելի դեպքերում հաղորդակցության նյութերում կապահովվի գենդերային առումով զգայուն լեզվի օգտագործումը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Աղյուսակ 6-ում ներկայացված գործիքները, որոնք կօգտագործվեն ՀՀ կառավարության ՎԷԱ և ԷԱ բնագավառի աշխատանքը հանրայնացնելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ	
Մամուլի ասուլիս	Կազմակերպվում է կոնկրետ գործողությունների մասին տեղեկացնելու նպատակով (գործունեության մեկնարկ, հիմնական ձեռքբերումներ և այլն):
ՉԼՄ-ների հետ հարցազրույցներ և ճեպագրույցներ	ՉԼՄ-ները կիրառվեն լուսաբանելու կարևոր միջոցառումները: Իսկ խոսակցների ելույթների հիմնական ուղերձները կտրամադրվեն նախապես:
Շրջայցեր	Պետական պաշտոնյաների, էներգաընկերությունների և կարգավորող մարմնի աշխատակիցների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների և այլոց այցելություններն, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն հանրությանը էլեկտրոնային տեղեկագրերում, հաջողության պատմություններում, սոցիալական լրատվամիջոցների և մամուլի ասուլիսների միջոցով:

ԱՂՅՈՒՄԱԿ 6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Պրեզենտացիաներ	ՀՀ կառավարության Էներգետիկ գործունեության մասին պրեզենտացիաներ՝ համաժողովների, դասընթացների, դոկտրինների հետ հանդիպումների ժամանակ ներկայացնելու համար:
Հաշվետվություններ	Տեխնիկական հաշվետվություններ կպատրաստվեն և կտարածվեն ավելի լայն շրջանակներում:
Հաջողության պատմություններ	Բնագավառում հիմնական ձեռքբերումների մասին հաղորդելու համար պարբերաբար պատրաստվող պատմությունների հրապարակում: Շեշտը դրվելու է թվային մեդիապատումների վրա, ներառյալ վիզուալ նյութերը (լուսանկարներ և տեսանյութեր), որոնք կարող են օգտագործվել բազմաթիվ հարթակներում, ներառյալ սոցիալական ցանցերում:
Սոցիալական ցանցեր	Առկա գործիքները կօգտագործվեն գործընկերների հետ հարաբերվելու, ձեռքբերումներն ու գալիք իրադարձությունները ներկայացնելու և գործողությունները հանրայնացնելու համար:
Թվային հարթակներ	Թվային բովանդակությունը, որն իրազեկում է ձեռքբերումների և ծրագրի ազդեցության մասին համաձայնությամբ կփոխանցվի համապատասխան հարթակներին (օրինակ՝ Climatelinks, Marketlinks և այլն)՝ ՀՀ ոլորտային գործունեության մասին իրազեկմանը նպաստելու նպատակով:
Էլեկտրոնային տեղեկագրեր, զանգվածային նամակագրություն և հրավերներ, ինչպես նաև այլ տեսակի գործողություններ համացանցում	<p>Էլեկտրոնային հաղորդակցության միջոցները կարող են արդյունավետորեն կիրառվել գործընկերներին իրազեկելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի.</p> <ol style="list-style-type: none"> 1) նկարագրել նախագիծը և դրա հետ կապված գործողությունները, 2) տեղեկացնել կոնկրետ գործողության նպատակների մասին, 3) շահագրգիռ կողմերին տեղեկացնել գալիք իրադարձությունների մասին, 4) փոխանցել ուսուցողական նյութեր:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԹԻՐԱԽՆԵՐ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆ

#	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱԽՆԵՐ	ՈՒՂԻՆԵՐ/ԳՈՐԾԻՔՆԵՐ	ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒ ԹՅՈՒՆ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ									
1	Թվային ուղեցույցների և ձևանմուշների պատրաստում	Մշակված ուղեցույցների և ձևանմուշների քանակ	4 (Ու) & 4 (Ձ)	Ուսումնական կյուբեր Թվային ուղեցույցներ	Բարձր				
		Թիրախային լսարանի թվային ինտերակտիվ գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	5,000 (առցանց և հեռուստատեսային դիտումներ)	ՏԿԵՆ-ի և ՀՎԷԷՀ-ի կայքերում հրապարակված ձևանմուշներ					
		ՎԷԱ և ԷԱ սուբվենցիոն Նոր հայտերի քանակ	8	Հեռուստատեսություն Առցանց և սոցիալական կայքեր					
2	Կայուն էներգիայի լուծումների քննարկման տարեկան հանդիպումներ համայնքների ներկայացուցիչների հետ	Հաղորդակցության արշավի միջոցառումների քանակ	4	Հիբրիդային միջոցառումներ	Բարձր				
		Միջոցառումների մասնակիցների թիվ	160						
		Թիրախային լսարանի թվային գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	1,000						
3	Էներգիանայողության չեյինջ ցուցադրական արշավ	Ներգրավված համայնքային շենքերի թիվ	30	Առցանց հայտ Մրցույթ	Ցածր				
		Ցուցադրական արշավի մրցույթի հայտ ներկայացնողների թիվ	100	Դեմ-առ-դեմ միջոցառում					
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ									

#	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱԽՆԵՐ	ՈՐԴԻՆԵՐ/ԳՈՐԾԻՔՆԵՐ	ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒ ԹՅՈՒՆ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
4	ՎԷՎ և ԷՎ թեմաների ինտեգրումը հեռուստահաղորդումներում	ՎԷՎ և ԷՎ թեմայի ինտեգրման համար ընտրված հեռուստահաղորդումների քանակ	5	TV YouTube	Ցածր				
		Թիրախային լսարանի թվային գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	5,000						
5	ՎԷՎ և ԷՎ հաղորդակցություն միջևորդ օղակներով	Միջոցառումների մասնակիցների թիվ	50	Առցանց հաղորդակցություն	Բարձր				
		Թիրախային լսարանի թվային գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	10,000	Ուսուցողական կյուբեր					
6	Էներգետիկ նախագծեր դպրոցներում	Թիրախային լսարանի թվային գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	500	Ուսուցողական կյուբեր, դպրոցներում էներգետիկ նախագծերի իրականացման ուղեցույցներ, մրցույթներ, հանրային միջոցառումներ, փոքրածավալ պիլոտային նախագծեր	Բարձր				
7	ՎԷՎ և ԷՎ լուծումները խթանող խորհուրդներ	Թիրախային լսարանի թվային գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	500	Սոցիալական մեդիա հարթակներ Ուսուցողական կյուբեր՝ ՎԷՎ և ԷՎ խորհուրդներ (ձմեռային և ամառային սեզոնների համար), անիմացիոն բացատրող տեսանյութեր	Բարձր				
8		Թիրախային լսարանի թվային	2,500 գործողություն		Բարձր				

#	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	ԹԻՐԱՆՆԵՐ	ՈՒՂԻՆԵՐ/ԳՈՐԾԻՔՆԵՐ	ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆ	2023-2024	2024-2025	2025-2026	2026-2027
	Էքսպո և մեդիա շրջայց պիլոտային համայնք	գործողությունների (հավանել, կիսվել, մեկնաբանել) քանակ	երի (հավանել, կիսվել, մեկնաբանել) 25,000 արձագանք	Ուղիղ հաղորդակցություն (Էքսպո, մեդիա տուր) Հանրային միջոցառում					
		Հաղորդակցության արշավի շնորհիվ մշակված կամ իրագործված նոր ներդրումների քանակ	10						
ԲԻԶՆԵՍՆԵՐ									
